



**ՀՀ - ԵՄ**

**միջև Համապարփակ և Ընդլայնված Գործընկերության Համաձայնագրի**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ**

**Մշտադիտարկման աշխատանքների վերլուծական գնահատական  
տարեկան զեկույց**

**2020**

**Չեկույցը պատրաստվել է՝** «ՀՀ-ԵՄ միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) իրականացման քաղաքացիական հասարակության համատեղ մշտադիտարկումն ու ջատագովությունը հանուն Հայաստանում վստահելի և համակարգային բարեփոխումների» Թբիլիսիում Նիդերլանդների թագավորության դեսպանության աջակցությամբ ծրագրի շրջանակներում:

***Չեկույցը պատրաստել են՝***

Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան  
Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ  
Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ  
Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն  
Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիա  
Իրազեկ քաղաքացիների միավորում ՀԿ

***Չեկույցի բովանդակության մեթոդաբանությունը՝***

Այս Չեկույցում ներկայացված են ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ով (այսուհետ Համաձայնագիր) պայմանավորված ՀՀ կառավարության կողմից գործողությունների քաղաքացիական հասարակության համատեղ մշտադիտարկման արդյունքում վերլուծական գնահատականներ: ՀՀ կառավարության կողմից մշտադիտարկման ենթակա գործողությունները բխում են ՀՀ և ԵՄ-ի միջև Համաձայնագրի շրջանակում մշակված և ընդունված փաստաթղթերից, ներառյալ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը, դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունը, հակակոռուպցիոն ռազմավարությունը: Մշտադիտարկման Չեկույցը նույնպես ներառում է վերը նշված փաստաթղթերում գործողությունների համատեքստում քաղաքացիական հասարակության կողմից ՀՀ կառավարությանը ներկայացված առաջարկները ու դրանց վերլուծական գնահատականը:

## Բովանդակություն

---

Սահմանադրական բարեփոխումներ .....	4
Բարձր Դատական Խորհրդի գործունեություն .....	6
Իրավապահ համակարգի բարեփոխումներ՝ քննչական կոմիտե .....	9
Իրավապահ համակարգի բարեփոխումներ՝ քրեական և պարեկային ոստիկանություն, սահմանապահ ծառայություն .....	14
Քրեական և քրեական դատավարության օրենսդրության բարեփոխումներ .....	16
Վարչական արդարադատության և վարչական վարույթի բարեփոխումներ .....	22
Ընտրական օրենսդրության բարեփոխումներ .....	33
Կոռուպցիայի դեմ պայքար .....	37
Հավաքների ազատություն, Լրատվամիջոցների, տեղեկատվության և կարծիքի արտահայտման ազատություն .....	42
Իրավահավասարություն, խտրականության արգելք .....	47
Խոշտանգումների արգելք .....	48
Գործի արդար քննության իրավունք .....	49

# Սահմանադրական բարեփոխումներ

- **Սահմանադրական բարեփոխումների նախագծի մշակումը և քաղաքացիական հասարակության առաջարկները**

*Գործողությունը՝ Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից սահմանադրական բարեփոխումների նախագծի մշակում:*

ՀՀ սահմանադրության 202-րդ հոդվածով սահմանված կարգով ՀՀ Ազգային ժողովի (ԱԺ) կողմից իրականացվել են սահմանադրական դատարանի շուրջ ստեղծված ճգնաժամի հաղթահարմանն ուղղված սահմանադրական փոփոխություններ, որով համամասնորեն սահմանադրական դատարանի անդամների և դատավորների լիազորությունների ժամկետները համապատասխանեցվեցին իրավական միասնական սկզբունքների կիրառության պահանջներին: Կատարված փոփոխությունների վերաբերյալ ընկալումները իրավական հանրայնում միանշանակ չեն և սահմանադրական փոփոխությունների այդ տարբերակը բացառապես ԱԺ կողմից իրականացնելը դիտարկվեց խնդրահարույց: Սահմանադրական լայնածավալ բարեփոխումներ իրականացնելու նպատակով ՀՀ վարչապետի 12.02.2020թ. թիվ 181-Ա որոշմամբ ձևավորված սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը պետք է մշակեր սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը, անցկացներ հանրային քննարկումներ և ներկայացներ վարչապետի աշխատակազմ, այնուհետև մինչև 2021թ. հունիսի 30-ը պետք է ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացվեր սահմանադրական փոփոխությունների նախագիծը: Հանձնաժողովի աշխատանքների նկատմամբ իրականացված մոնիտորինգի արդյունքները ցույց են տալիս, որ հանձնաժողովում թիմային աշխատանքը, համակարգված, միմյանց հետ փոխկապակցված իրավակարգավորումներով ինստիտուցիոնալ լուծումները բացակայել են և հանձնաժողովը հիմնարար խնդիրների վերաբերյալ համակարգված լուծումներ չի առաջարկել: Պայմանավորված համավարակով և պատերազմական գործողություններով, հանձնաժողովի աշխատանքներն, ըստ էության, դադարեցվել են:

ՀՀ վարչապետի որոշմամբ ձևավորվել է սահմանադրական փոփոխությունների հանձնաժողով, որը մինչև 2020թ. հոկտեմբեր պետք է ներկայացներ սահմանադրական փոփոխությունների հայեցակարգը, սակայն հետագայում երկարացվել է մինչև դեկտեմբեր: Մինչ 2020թ. դեկտեմբեր հանձնաժողովը չի ներկայացրել հայեցակարգը: Դիտարկման շրջանակներում պետք է արձանագրել սահմանադրական դատարանի շուրջ ձևավորված խնդրով ԱԺ կողմից սահմանադրության փոփոխությունները, որոնք իրավական տեսանկյունից ունեն հակասություններ:

Վարչապետի որոշմամբ<sup>1</sup> ձևավորված սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի առաջին նիստը<sup>2</sup> տեղի է ունեցել 2020թ. փետրվարի 21-ին: Հանձնաժողովի աշխատանքների ընթացքում քաղաքացիական հասարակության կողմից ներկայացվել են առաջարկություններ և առարկություններ: Մասնավորապես՝ առարկությունն<sup>3</sup> է ներկայացվել Հայ-առաքելական Սուրբ Եկեղեցու սահմանադրական կարգավիճակի փոփոխության հայեցակարգային առաջարկության դեմ՝ վերջինս հանրային իրավունքի իրավաբանական անձ սահմանելու հարցում: Նաև

<sup>1</sup> Տե՛ս <https://www.moj.am/storage/uploads/20-181.pdf>

<sup>2</sup> Տե՛ս <https://www.azatutyun.am/a/30447164.html>

<sup>3</sup> Տե՛ս <https://docs.google.com/document/d/1OSllcOgq6nnEVt35BrO4KQksIIU6d6RLaWc7nC0aZOo/edit#heading=h.vwdgzqbhu2tc>

առարկություն <sup>4</sup> Է ներկայացվել ՀՀ անդամակցած վերպետական միջազգային կազմակերպությունների (ԵԱՏՄ-ին) անմիջական կիրառություն ենթադրող նորմատիվ իրավական ակտերը ՀՀ Սահմանադրությամբ նորմատիվ իրավական ակտերի համակարգում ներառելու և օրենսդրությամբ դրանց աստիճանակարգություն նախատեսելու հնարավորության ստեղծման հայեցակարգային առաջարկության դեմ: Նաև ներկայացվել է քվեարկության նվազագույն տարիքի նվազեցմանն ուղղված առաջարկություն <sup>5</sup> : Ուղիղ ժողովրդավարության իրականացման մեխանիզմների ամրապնդմանն ուղղված առաջարկությունները, որոնք քաղաքացիներին կտան իշխանություն իրացնելու ավելի լայն հնարավորություններ, այս պահին գտնվում են աշխատանքային փուլում՝ հաշվի առնելով սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի աշխատանքների ժամանակավոր դադարեցումը՝ կապված Արցախյան պատերազմի հետ:

Ներառականության մասին Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովում ընդգրկված են քաղ. հասարակության երկու ներկայացուցիչ, այդ թվում սույն մշտադիտարկման թիմի ներկայացուցիչը: Հանձնաժողովում քաղաքացիական հասարակության ներգրավվածությունն այն դարձնում է ավելի մասնակցային և թափանցիկ: Հանձնաժողովն իր աշխատանքներում փորձել է ապահովել ներառականություն՝ չնայած, այդուհանդերձ, հանրությունը ոչ միշտ էր տեղյակ լինում հանձնաժողովի ներսում քննարկվող թեմաներից: Այնուամենայնիվ, կազմակերպվել են մի շարք հանրային քննարկումներ տարբեր կազմակերպությունների կողմից: Քննարկվող տարբեր հարցերի շուրջ եղել են հանրային պարզաբանումներ նաև լրատվամիջոցներով:<sup>6</sup>

▪ **Անցումային արդարադատություն**

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությամբ նախատեսված էր 2020թ. առաջին եռամսյակում ստեղծել փաստահավաք հանձնաժողով: Սակայն փաստահավաք հանձնաժողովի մասին օրենսդրական ակտի նախագիծը ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ դրվեց 2020թ. մայիսին՝ առաջարկներ ներկայացնելու համար: Ըստ նախագծի հեղինակ նախարարության՝ նախագիծը գտնվում է լրամշակման փուլում:

## Դատական իշխանության անկախություն, անաչառություն

«ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենք»-ում կատարված փոփոխությունների համաձայն՝ ձևավորվել են դատավորների աշխատանքի գնահատման, ուսումնական և էթիկայի հարցերով հանձնաժողովները, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է գործառույթ վարքագծի կանոնների պահպանման, գործունեության մասնագիտական չափանիշների ապահովման և մասնագիտական որակների ապահովման ոլորտներում: Հանձնաժողովների աշխատանքների կազմակերպման թափանցիկության և հաշվետվողականության ապահովման առումով ընդունված իրավակարգավորումները միանշանակ գնահատվում են դրական, քանի որ նրանցում ապահովված է ՀԿ ներկայացուցիչների մասնակցությունը և իրական ազդեցության ապահովման մեխանիզմները:

---

<sup>4</sup> Տե՛ս [https://docs.google.com/document/d/1gFip7cR0SODh7qGVVUnoLNRALGypjE7nb20Z2B\\_7ZzY/edit#](https://docs.google.com/document/d/1gFip7cR0SODh7qGVVUnoLNRALGypjE7nb20Z2B_7ZzY/edit#)  
<sup>5</sup> Տե՛ս <https://docs.google.com/document/d/1duyBHUXztVg6GYM9h6wnHCT'kivXi2507/edit>  
<sup>6</sup> Տե՛ս հետևյալ հղումները՝ [Հանրային քննարկում սահմանադրական հակակոռուպցիոն մարմնի/մարմինների հայեցակարգի վերաբերյալ, Բարձրագույն դատական ատյանները սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում, Քննարկվել է Վճռաբեկ և Սահմանադրական դատարանների ֆունկցիաները միավորելու առաջարկը. Եղիշե Կիրակոսյան, Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կատարած աշխատանքները. 1-ին հանրային քննարկում, Ինչո՞ւ է անհրաժեշտ փոխել Սահմանադրությունը, Քննարկվում է ՄԴ-ի եւ Վճռաբեկ դատարանի միավորման հարցը. Եղիշե Կիրակոսյան](#)

Դատավորների թվի ավելացում է նախատեսվում ներկայումս ԱԺ-ում 1-ին ընթերցման փուլում գտնվող «ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենք»-ում փոփոխություն և լրացում նախատեսող օրենքի նախագծով, որով մասնավորապես՝ ձևավորվելու են հակակոռուպցիոն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները: 2021թ. նախատեսվում է ավելացնել նաև սնանկության գործերով դատավորների թիվը: Հակակոռուպցիոն դատավորների ընտրության գործընթացում օրենսդրորեն ապահովված է ՀԿ ոլորտի ներկայացուցիչների, ինչպես նաև ըստ անհրաժեշտության կարող է ներգրավվել միջազգային փորձագետներ: Նախատեսված է նաև հոգեբանների մասնակցություն:

## Բարձր Դատական Խորհրդի գործունեություն

- **«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք**

*Գործողությունը՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ ուղղված՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշումներ ընդունելու գործընթացի բարելավմանը՝ ներառելով այդ որոշումների ընդունման թափանցիկության, պատճառաբանվածության և ընդունման համար անհրաժեշտ ձայների արդյունավետ կառուցակարգեր:*

[www.e-draft.am](http://www.e-draft.am) կայքում 09.08.2019 - 26.08.2019թթ [հանրային քննարկման են դրվել](#) «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծերը: ՀՀ Ազգային ժողովը 2020թ. մարտի 25-ին երկրորդ ընթերցմամբ ամբողջությամբ [ընդունեց](#) «ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը: Փոփոխությամբ նախատեսվել է, որ դատավորին և Բարձր Դատական Խորհրդի (ԲԴԽ) անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ ԲԴԽ որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, իսկ դատավորի և ԲԴԽ անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և ԲԴԽ անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշումները՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Միաժամանակ, նույն փոփոխություններով ընդունվել է նաև դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի կազմման կարգի փոփոխություն, այն է՝ ԲԴԽ հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկման ավարտից հետո անցկացվում է բաց քվեարկություն ընթացքում ԲԴԽ յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է «կողմ» կամ «դեմ»: Չնայած օրենսգրքով նախատեսվում է սահմանել դատավորների հավակնորդների ընտրության բաց քվեարկության կարգ, այդուամենայնիվ, թեկնածուների գնահատումը թողնված է ԲԴԽ անդամների ներքին համոզմանը և որոշման պատճառաբանվածության մասին որևէ պահանջ

նախատեսված չէ: Հարկ է նշել, սակայն, որ այսքանով չի ապահովվում ԲԴԽ կողմից որոշումների ընդունման թափանցիկություն և պատճառաբանվածություն<sup>7</sup>:

▪ **ԲԴԽ դատավորի լիազորություններ**

*Գործողությունը՝ 33 դատական օրենսգրքով նախատեսել Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումները դատավորի կողմից բողոքարկելու հնարավորությունը:*

[www.e-draft.am](http://www.e-draft.am) կայքում 09.08.2019-26.08.2019թթ [հանրային քննարկման են դրվել](#) «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծերը: ՀՀ Ազգային ժողովը 2020թ. մարտի 25-ին երկրորդ ընթերցմամբ ամբողջությամբ ընդունեց «ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը: Նախագծով փոփոխություն է նախատեսվել նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումները դատավորի կողմից բողոքարկելու հնարավորությունը դատավորների կողմից: Ընդունված կարգավորումը չի հանդիսանում ԲԴԽ որոշման բողոքարկում, այլ նույն մարմնի կողմից գործի վերանայում միայն նոր երևան եկած հանգամանքների բերումով և որոշման իրավաչափությունն ու բովանդակությունը քննության չի առնվում այլ մարմնի կողմից նույն փաստերի և ապացույցների հիման վրա:

Ընդունված կարգապահական որոշումների համար պետք է բողոքարկման արդյունավետ հնարավորություն նախատեսել: Վենետիկի հանձնաժողովը կարևորում է, որպեսզի բողոքարկման մարմինն սահմանված լինի օրենքով: Որոշումները պետք է այնպիսի մարմնի կողմից վերանայվեն, որն անկախ է և ապահովում է դատական գործընթացների/արդար դատաքննության բոլոր երաշխիքները<sup>8</sup>: Վենետիկի հանձնաժողովը ողջունում է այնպիսի կարգավորումներ, որոնք նախատեսում են բողոք ներկայացրած անձի մասնակցությունը վարույթին: Սակայն պետք է նախատեսել նաև մասնակցության որոշակի ցուցանիշներ և տեղեկությունները տարածելու հետևանքները: Դատավորը պետք է վարույթի նախնական փուլից տեղյակ լինի դրա մասին և հնարավորություն ունենա խորհրդատվություն ստանալ վարույթի բոլոր փուլերում<sup>9</sup>: Օրենսդրական մակարդակում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի հետ կապված ամենամեծ բացթողումն ու խնդիրը կապված է կայացված որոշման բողոքարկման մեխանիզմների բացակայության հետ: Այսպես, Դատական օրենսգիրքը սահմանում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին ԲԴԽ որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է: Հատկանշական է, որ սույն մոտեցումն ու մտահոգությունը արտահայտվել է նաև ՀՀ դատական օրենսգրքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից տրված կարծիքում (194): Մասնավորապես, Հանձնաժողովը նշել է, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը Սահմանադրական դատարան բողոքարկելը վերանայում չի կարող համարվել: Նախ, բողոքարկման նման հնարավորությունը բավականին նեղ շրջանակ ունի և սահմանադրականության հարցը նման

<sup>7</sup> Տե՛ս Venice Commission, Compilation of Venice Commission Opinions and Reports concerning Courts and Judges, CDL-PI(2015)001.

<sup>8</sup> Տե՛ս Venice Commission Opinion on the laws on the Disciplinary Liability and evaluation of Judges of the Former Yugoslav Republic of Macedonia, No 825/2015.

<sup>9</sup> Տե՛ս Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe on the Draft Law on Making Changes to the Law on Disciplinary Liability and Disciplinary Proceedings of Judges of General Courts of Georgia.

դեպքերում հաճախ չի ծագում: Ավելին, ինչպես արդեն հայտնել է Վենետիկի հանձնաժողովը, կարգապահական հարցերով որոշումների բողոքարկման քննությունը Սահմանադրական դատարանի հիմնական գործառնություններից չէ: Հետևաբար, Սահմանադրական դատարանը նման բողոքներ քննող մարմին չէ, և կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորի կողմից սահմանադրական դատարան բողոքի ներկայացումը կարգապահական պատասխանատվության որոշման բողոքարկման պատշաճ մեխանիզմ չէ: Հետևաբար, բողոքարկման համակարգի բացակայությունը մտահոգության տեղիք տվող հարց է: Հանձնաժողովը կրկին հաստատել է բողոքարկման մեխանիզմի անհրաժեշտությունը: Որպես լուծում քննարկվել է կամ Վճռաբեկ դատարանը, սակայն Սահմանադրությունը նման հնարավորություն չի տալիս, կամ ԲԴԽ կազմում առանձին պանելի ձևավորումը: Նախագծի հեղինակն Արդարադատության նախարարությունն է:

▪ **ԲԴԽ դատավորի անկախությունը**

*Գործողություններ՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներում հստակեցնել դատավորի վարքագծի կանոնները և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, ավելացնել այնպիսի վարքագծի կանոններ, որոնց խախտումը կասկածի տակ է դնում դատավորի անկախությունը, անկողմնակալությունը և անկաշառությունը, սահմանել դատավորների բարեվարքության գնահատման համար անհրաժեշտ կառուցակարգեր՝ ուղղված.*

*ա. ՀՀ բոլոր դատավորների, Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից օրենքով սահմանված ժամկետում իրենց գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնելուն.*

*բ. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ՀՀ-ում գործող բոլոր դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրությանը.*

*գ. ԲԴԽ անդամների՝ բարեվարքության տեսանկյունից խնդրահարույց հայտարարագրերի վերհանմանը, դրանց հիման վրա կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկման համար համապատասխան նյութերը ԲԴԽ ներկայացնելուն.*

*դ. Դատավորների՝ բարեվարքության տեսանկյունից խնդրահարույց հայտարարագրերի վերհանմանը, դրանց հիման վրա կարգապահական վարույթի հարուցմանը և ԲԴԽ ներկայացնելուն.*

*ե. ԲԴԽ կողմից վերոգրյալ հայտարարագրերի արդյունավետ քննությանը:*

ՀՀ Ազգային ժողովը 2020թ. մարտի 25-ին երկրորդ ընթերցմամբ ամբողջությամբ ընդունեց «ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը,<sup>10</sup> որով նախատեսվել է որպես դատավորների վարքագծի ընդհանուր կանոն ներառել գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրի ներկայացումը, ինչպես նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնել պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ, որոնք հաստատում են, որ իր գույքի փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) ողջամտորեն հիմնավորվում է օրինական եկամուտներով, կամ իր մոտ առկա չէ չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրը օրինական է և արժանահավատ է: Սրանք վերաբերելի են նաև ԲԴԽ անդամներին: Վերոգրյալ

<sup>10</sup> Տե՛ս [http://parliament.am/draftreading\\_docs7/K-428\\_DR2.pdf](http://parliament.am/draftreading_docs7/K-428_DR2.pdf)



վարքագծի կանոնների խախտման առնչությամբ դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ կարգապահական պատասխանատվության վարույթ կարող է հարուցել միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

## Իրավապահ համակարգի բարեփոխումներ՝ քննչական կոմիտե

### ▪ **Քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելը**

*Գործողություն՝ Համապատասխան իրավական ակտերում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ ուղղված քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի կատարելագործմանը:*

Նախագծերի փաթեթը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել ԱԺ: Նախագծի վերաբերյալ եզրակացություններ են ներկայացրել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունը, Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ քննարկում տեղի չի ունեցել: Ըստ «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշմամբ հաստատված գործողությունների ծրագրերի 2020 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա գործողությունների ընթացքի վերաբերյալ հաշվետվության (այսուհետ՝ ռազմավարությամբ հաստատված գործողությունների ծրագրերի ընթացքի վերաբերյալ հաշվետվություն)՝ 2020 թվականի 1-ին կիսամյակում քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի փոփոխություն նախատեսող համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծերի փաթեթը մշակվել է, իսկ 2020 թվականի 2-րդ կիսամյակում նախագծերի փաթեթը քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ, հաստատվել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ: 09.12.2020թ.-ին ԱԺ-ի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է «ՀՀ քննչական կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (Կ-610-12.05.2020, 09.09.2020-ՊԻ-011/1): Մասնավորապես սահմանվել են կարգապահական տույժերը քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառելու, կարգապահական խախտման վերաբերյալ գրավոր բացատրության, ծառայողական քննության փուլերի հետ կապված կարգավորումներ: Օրենքի նախագծով առաջարկվում է խիստ նկատողություն, դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնից ազատում կարգապահական տույժերը քննչական կոմիտեում ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառել ծառայողական քննություն անցկացնելուց հետո, իսկ զգուշացում և նկատողություն կարգապահական տույժերի դեպքում ծառայողական քննություն իրականացնել միայն այն դեպքում, երբ կարգապահական պատասխանատվության ենթակա ծառայողը չի ընդունում կատարված խախտման մեջ իր մեղավորությունը: Մասնավորապես, ըստ նախագծի՝ կարգապահական տույժ նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարգապահական խախտման վերաբերյալ գրավոր բացատրություն է պահանջում կարգապահական խախտում թույլ տված անձից, իսկ վերջինս ներկայացված բացատրության մեջ չի ընդունում կատարված խախտման մեջ իր մեղավորությունը: Նախ, անհրաժեշտ է փաստել, որ

ծառայողի կողմից բացատրություն տալը իրավունք է, այլ ոչ թե պարտականություն: Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ քննչական կոմիտեի ծառայողի իրավունքն է բացատրություն տալ իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ, այնինչ Նախագծում օգտագործված «գրավոր բացատրություն պահանջել» հասկացությունն ընկալվում է որպես ներկայացված պահանջին պարտադիր կերպով պատասխանելու պարտականություն, այն էլ այն դեպքում, երբ ենթադրյալ իրավախախտման առնչությամբ ծառայողական քննություն չի հարուցվել: Կատարված փոփոխություններով իրավախախտման հանգամանքները չեն ուսումնասիրվելու պատշաճ ընթացակարգի շրջանակներում՝ բացառելով լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության կատարումը, այդ թվում՝ կարգապահական իրավախախտմանը համարժեք տույժ նշանակելը: Նման պայմաններում, բարձր է ռիսկը, որ առավել խիստ կարգապահական տույժի չենթարկվելու համար քննչական կոմիտեի ծառայողն ընդունի իր մեղավորությունը և այդպիսով խուսափի ծառայողական քննության իրականացումից և առավել խիստ կարգապահական տույժի ենթարկվելուց: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ապահովել կարգապահական վարույթի հիմնական լուսման փուլում ծառայողի իրավունքներն ու լաված լինելու իրավունքի ապահովումը, քանի որ գործող կարգավորումներով: Հիմնական լուսման փուլում ենթադրյալ իրավախախտման մեջ կասկածվող ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի նիստին մասնակցելու և բացատրություն տալու իրավունքը կախված է Հանձնաժողովի նախագահի կամ Հանձնաժողովի անդամի կամահայտնությունից<sup>11</sup>: ՀՀ ՔԿ նախագահի կողմից 12.05.2020թ.-ին արձակվել է N 97-Լ հրամանը՝ ՀՀ ՔԿ կողմից իրականացվող ՀՀ կառավարության որոշումներով հաստատված ռազմավարություններից բխող 2020-2023թթ. գործողությունների ցանկը հաստատելու մասին<sup>12</sup>:

Հավելված N 1-ով հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրից բխող Կոմիտեի իրավասության շրջանակներում իրականացվող գործողությունների ցանկը: Ըստ այդմ, նախատեսվում է Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուների, դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում (N 2 հավելվածի 9-րդ կետ): Կոմիտեն պետք է ներկայացնի առաջարկություններ պատասխանատու մարմին (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահված «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ ուսումնասիրությունների իրականացման և տվյալ անձին նշանակելու իրավասություն ունեցող անձին նշանակման նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան խորհրդատվական բնույթի եզրակացություն ներկայացնելու գործառնությամբ սահմանող իրավական ակտերի նախագծերի փաթեթի վերաբերյալ: Այս հարցով պատասխանատու ստորաբաժանումն է Կոմիտեի դեպարտամենտի իրավական ապահովման և վիճակագրության վարչությունը: Հավելված N 1-ով հաստատվել է ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1441-Լ որոշմամբ հաստատված ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող Կոմիտեի իրավասության շրջանակներում իրականացվող գործողությունների ցանկը: Ըստ այդմ, անհրաժեշտ է համապատասխան իրավական ակտերում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ ուղղված քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի

<sup>11</sup> ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ, կետ 43:

<sup>12</sup> Տե՛ս <http://investigative.am/news/view/hraman-razmavarutyunic-bxox-gorcoxutyunner.html>

կատարելագործմանը (N 2 հավելվածի նպատակ 10, ռազմավարական ուղղություն՝ քննչական մարմինների բարեփոխում, գործողություն 1): Կոմիտեն պետք է համագործակցի պատասխանատու մարմնի հետ (ՀՀ արդարադատության նախարարություն) «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծ մշակելու գործում՝ քննիչների բարեփոխության արդյունավետ, թափանցիկ գնահատման, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատանքների կատարելագործման, էթիկայի հանձնաժողով ստեղծելու անհրաժեշտ կարգավորումներ նախատեսելու նպատակով: Պատասխանատու ստորաբաժանումն է Կոմիտեի դեպարտամենտի իրավական ապահովման և վիճակագրության վարչությունը: Համակատարողները՝ Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունը, Կոմիտեի դեպարտամենտի անձնակազմի կառավարման վարչությունը: Գործողության կատարման ժամկետն է՝ 2020թ. 1-ին կիսամյակը: 09.12.2020թ.-ին «ՀՀ քննչական կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքն ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ (Կ-610-12.05.2020,09.09.2020-ՊԻ-011/1)<sup>13</sup>:

▪ **Պատասխանների թվակազմի ավելացումը, աշխատավարձը, հավելավճարները**

*Գործողությունը՝ Մշակել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված դատախազների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը և դատախազների թվակազմի ավելացմանը:*

Նախագծերի մշակման պատասխանատուներն են ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ գլխավոր դատախազությունը (համաձայնությամբ): «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում 2020 թվականի հունիսի 25-ին կատարվել են լրացումներ<sup>14</sup>: Սահմանվել են «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով սահմանված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարի տեղակալի և ստորաբաժանման ավագ դատախազների, նույն ստորաբաժանման դատախազի պաշտոնային դրույքաչափերը: Այնուամենայնիվ, ըստ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող 2021-2023 թվականների գործողությունների ծրագրի՝ աստիճանաբար աճում է դատախազների ծանրաբեռնվածությունը: Մասնավորապես, եթե 2017թ. քրեական գործերի նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների տարեկան զբաղվածությունը կազմել է 81.8 քրեական գործ, 2018թ.՝ 102.9 քրեական գործ, ապա միայն 2019թ. 1-ին կիսամյակում՝ 75.7 քրեական գործ: 2021թ. նախատեսվում է մշակել Պատասխանների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը և դատախազների թվակազմի ավելացմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթը: 2022թ. նախատեսվում է նախագծերի փաթեթի քննարկում շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ, ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ և հաստատում ՀՀ կառավարության կողմից: 2023թ. նախատեսվում է նախագծերի փաթեթը ներկայացնել ՀՀ ԱԺ: Կատարվել են համապատասխան փոփոխություններ նաև «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում: Նախագիծը՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով սահմանված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարի տեղակալի և ստորաբաժանման ավագ դատախազների, նույն ստորաբաժանման դատախազի մասով<sup>15</sup> ընդունվել է: Մյուս մասերով դեռևս չի մշակվել և ներկայացվել:

<sup>13</sup> Տե՛ս <http://www.parliament.am/register.php?ID=594#r9163>  
<sup>14</sup> Տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docid=143979>  
<sup>15</sup> Տե՛ս <https://www.e-draft.am/projects/2499/justification>

▪ **Քննիչների թվակազմի ավելացումը, աշխատավարձը, հավելավճարները**

*Գործողություն՝ Մշակել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված քննիչների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը և քննիչների թվակազմի ավելացմանը:*

Նախագծերի մշակման պատասխանատուներն են ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությունը, Քննչական կոմիտեն (համաձայնությամբ), Հատուկ քննչական ծառայությունը (համաձայնությամբ): Ըստ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությունից բխող 2021-2023թթ. գործողությունների ծրագրի՝ 2015թ-ից սկսած մինչև 2019թ-ի առաջին կիսամյակը աճել է ՀՀ քննչական կոմիտեի քննիչների ծանրաբեռնվածությունը: Մասնավորապես՝ 2018թ. առաջին կիսամյակի ընթացքում քրեական գործերի քանակը կազմել է 12622, իսկ 2019թ. առաջին կիսամյակի ընթացքում՝ 18973: Քրեական գործերի վարույթների քանակի աճը պայմանավորել է ՀՀ քննչական կոմիտեի քննիչների ծանրաբեռնվածության աճը<sup>16</sup>: Այսինքն, 2019թ. առաջին կիսամյակի ընթացքում քննիչների միջին ծանրաբեռնվածությունը աննախադեպ բարձր է վերջին 5 տարիների կտրվածքով, ավելին, ՀՀ քննչական կոմիտեի ենթակայությանը վերապահվող քրեական գործերի քանակն էլ ավելի է աճում՝ պայմանավորված օրենսդրական փոփոխություններով: 2021թ. նախատեսվում է մշակել քննիչների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը և քննիչների թվակազմի ավելացմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթը: 2022թ. նախատեսվում է նախագծերի փաթեթի քննարկում շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ, ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ և հաստատում ՀՀ կառավարության կողմից: 2023թ. նախատեսվում է նախագծերի փաթեթը ներկայացնել ՀՀ ԱԺ: ՀՀ ՔԿ նախագահի կողմից 12.05.2020թ.-ին արձակվել է N 97-Լ հրամանը՝ ՀՀ ՔԿ կողմից իրականացվող ՀՀ կառավարության որոշումներով հաստատված ռազմավարություններից բխող 2020-2023թթ. գործողությունների ցանկը հաստատելու մասին<sup>17</sup>, որի հավելված 2-ով նույնպես անդրադարձ է կատարվում քննիչների աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացման և քննիչների թվակազմի ավելացման հարցերին<sup>18</sup>: Նախագիծը դեռևս չի մշակվել և ներկայացվել:

▪ **Քննիչների կարողությունների զարգացումը**

*Գործողություն՝ Իրականացնել քննիչների կարողությունների զարգացում կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում:*

Պատասխանատուներն են ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ քննչական կոմիտեն, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը: ՀՀ ՔԿ նախագահի կողմից 12.05.2020թ.-ին արձակվել է N 97-Լ հրամանը՝ ՀՀ ՔԿ կողմից իրականացվող ՀՀ կառավարության որոշումներով հաստատված ռազմավարություններից բխող 2020-2023թթ. գործողությունների ցանկը հաստատելու մասին<sup>19</sup>: Ըստ հրամանի նախատեսվում է 2020-2022թթ.-ի

<sup>16</sup> Մասնավորապես՝ 2019թ. առաջին կիսամյակի ընթացքում քննիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 40,5 քրեական գործ, 2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում՝ 28,4 քրեական գործ, 2017թ. առաջին կիսամյակի ընթացքում՝ 23,2 քրեական գործ, 2016թ. առաջին կիսամյակի ընթացքում՝ 26,6 քրեական գործ, և 2015թ. առաջին կիսամյակի ընթացքում՝ 24,9 քրեական գործ:

<sup>17</sup> Տե՛ս <http://investigative.am/news/view/hraman-razmavarutyunic-bxox-gorcoxutyunner.html>

<sup>18</sup> Տե՛ս <http://investigative.am/news/view/hraman-razmavarutyunic-bxox-gorcoxutyunner.html>

<sup>19</sup> Տե՛ս <http://investigative.am/news/view/hraman-razmavarutyunic-bxox-gorcoxutyunner.html>

ընթացքում իրականացնել վերապատրաստումներ (դասընթացներ)՝ ա. կյանքի իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ՋՈւ հրամանատարների, ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների, փաստաբանների և քրեակատարողական ծառայության ծառայողների համար (N 2 հավելվածի 1-ին կետ), բ. ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության թեմաներով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների ու բուժաշխատողների, կրթական հաստատությունների ներկայացուցիչների համար, ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների աշխատակիցների համար (N 2 հավելվածի 7-րդ կետ), գ. խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ոստիկանների, ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների, հոգեբուժական, երեխաների խնամքի հաստատությունների աշխատողների, քրեակատարողական ծառայության ծառայողների և բժշկական անձնակազմի համար (N 2 հավելվածի 26-րդ կետ), դ. գործի արդարացի քննության իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ոստիկանների, ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների համար (N 2 հավելվածի 34-րդ կետ):

Ըստ ռազմավարությամբ հաստատված գործողությունների ծրագրերի ընթացքի վերաբերյալ հաշվետվության<sup>20</sup> մշակվել են Ռազմավարությամբ նախատեսված բնագավառներում քննիչների վերապատրաստումների ծրագրերը, դրանցում ներառվել են, մասնավորապես, «Կոռուպցիոն դեպքերի քննությունը», «Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննությունը», «Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը», «Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան», ինչպես նաև «Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում» վերտառությամբ դասընթացները: Նշված թեմաներով վերապատրաստման դասընթացներ մշակվել և իրականացվում են նաև միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի HELP<sup>21</sup> հեռավար հարթակի շրջանակներում<sup>22</sup>: ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների (քննիչների) վերապատրաստման ուսուցման 2020թ. ծրագրով վերապատրաստման ժամանակացույց է սահմանվել 2020թ. մայիս-դեկտեմբեր ամիսները՝ հետևապես վերապատրաստումները դեռ ընթացքի մեջ են: 2020թ. 1-ին կիսամյակին վերապատրաստվել են ՀՀ հատուկ քննչական ծառայության 5 քննիչ: Ըստ Արդարադատության ակադեմիայի կողմից հրապարակված քննչական համակարգի ունկնդիրների 2020թ. ուսուցման ծրագրերի, վերը նշված թեմաները նույնպես ներառված են դրանցում<sup>23</sup>: 20.02.2018թ.ի ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 22-Լ հրամանով սահմանվեց ՀՀ քննչական կոմիտեի մարմիններում և ստորաբաժանումներում էլեկտրոնային եղանակով տեղեկատվական-որոնողական համակարգերից օգտվելու կարգը<sup>24</sup>: Արձակվել է հրաման քննչական կոմիտեի նախագահի կողմից, սակայն այն չի նախատեսում նշված ոլորտների վերաբերյալ վերապատրաստման դասընթացները: Սույն կետում նշված թեմաներով դասընթացներ են նախատեսվել Արդարադատության ակադեմիայում:

<sup>20</sup> Տե՛ս [https://www.moj.am/storage/files/legal\\_acts/legal\\_acts\\_9548980704171\\_final-23.07.2020.pdf](https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9548980704171_final-23.07.2020.pdf)

<sup>21</sup> Տե՛ս Human Rights Education for Legal Professionals (HELP) <http://help.elearning.ext.coe.int/>

<sup>22</sup> Տե՛ս [http://e-rights.am/file.php?class\\_name=company\\_document\\_file&file\\_uniq\\_id=63645f2bc2b55978b6020&size\\_mode=1](http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=63645f2bc2b55978b6020&size_mode=1)

<sup>23</sup> Տե՛ս <http://www.justiceacademy.am/#1959>

<sup>24</sup> Տե՛ս <http://investigative.am/news/view/hraman-texekatvakan-voronoxakan-hamaka8geric-ogtvelu-karg.html>

- **Քննչական Կոմիտեի և Հատուկ Քննչական Ծառայության ղեկավարների ընտրությունը**

*Գործողությունը՝ (առաջարկվող ՔՀ կողմից՝ Ապահովել Քննչական Կոմիտեի (ՔԿ) և Հատուկ Քննչական Ծառայության (ՀՔԾ) ղեկավարների ընտրությունը Ազգային Ժողովի որակյալ մեծամասնությամբ, նրանց տեղակալների նշանակումը՝ ԱԺ գլխադասային հանձնաժողովներում թեկնածությունների շուրջ խորհրդակցություններ անցկացնելուց հետո: Միավորել հարկային, մաքսային և ազգային անվտանգության քննչական մարմինները Քննչական կոմիտեի կազմում՝ որպես Կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներ)*

Տվյալ գործողությունն առաջարկվել է ՔՀԿ-ների կողմից, սակայն չի ընդունվել Կառավարության կողմից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի առանձնահատկություններով պայմանավորված՝ հետաքննության և նախաքննության գործառույթները, կոռուպցիոն հանցագործություններով օպերատիվ-հետախուզական գործողությունները իրականացվում են տարբեր մարմինների կողմից, ինչն իր հերթին հանգեցնում է կոռուպցիոն հանցագործությունների քննության ապակենտրոնացվածության: Հակակոռուպցիոն կենտրոնի ստեղծման արդյունքում միավորվում են ԱԱԾ-ի, ՔԿ-ի և հարկային և մաքսային մարմինների քննչական ստորաբաժանումները: Հակակոռուպցիոն կոմիտե ունենալու համար 2021-23թթ. պետական բյուջեից կհատկացվի 8 միլիարդ 203 մլն 983 հազար դրամ: Այս գործողության վերաբերյալ այլ տեղեկատվություն առկա չէ:

## Իրավապահ համակարգի բարեփոխումներ՝ քրեական և պարեկային ոստիկանություն, սահմանապահ ծառայություն

- **Ներքին գործերի նախարարությունը**

*Գործողությունը՝ Ներքին գործերի նախարարության ստեղծում:*

Համաձայն Արդարադատության նախարարության կողմից ստացված նամակի՝ արդեն մշակվել է ՆԳՆ ստեղծման օրենսդրական փաթեթը՝ գործող օրենսդրական դաշտում համապատասխան փոփոխություններով: Փաթեթը աշխատանքային կարգով քննարկվել է ՀՀ ոստիկանության հետ: Ներկայումս իրականացվում են վերջնականացման աշխատանքներ, որից հետո ամբողջական փաթեթը կներկայացվի հանրային քննարկման ու կշրջանառվի համապատասխան գերատեսչությունների շրջանում: Համաձայն փաթեթի՝ Օպերատիվ կառավարման կենտրոնի (ՕԿԿ) ծրագրային ապահովման տեխնիկական առաջադրանքը ձևավորվել է անձնական տվյալների մշակման գործող օրենսդրական պահանջների հաշվառմամբ: ՕԿԿ գործարկման ու որոշակի ժամկետում փորձարկման արդյունքներով վերհանված խնդիրները, ենթադրվում է, ենթակա կլինեն հետագա ենթաօրենսդրական կարգավորումների՝ փորձարկման արդյունքում անհրաժեշտության դեպքում: Համաձայն ՆԳՆ ու ոստիկանության նոր նախագծի՝ կառուցվածքային առումով միգրացիայի, անձնագրային ու վիզաների ստորաբաժանումներն ապառազմականացվում են, վերջիններիս հիման վրա ՆԳՆ կազմում ստեղծվելու է Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն, ինչը ենթադրում է, որ համապատասխան ծառայողները լինելու են քաղաքացիական ծառայության ներկայացուցիչներ:



- **Պարեկային ոստիկանությունը, Ոստիկանության ռազմականացված ստորաբաժանման գործառույթները, Պետական սահմանին անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների ու այլ իրերի բացթողնման գործառույթները, Օպերատիվ Կառավարման Կենտրոնի (ՕԿԿ) կողմից քաղաքացիների անձնական տվյալների հարգման օրենսդրական երաշխիքները**

*Գործողությունները՝ Պարեկային ոստիկանության (Պարեկային ծառայության) ստեղծում:*

*Ոստիկանության ռազմականացված ստորաբաժանման ֆունկցիաներից պարեկային ծառայության ֆունկցիաների հանում:*

*Պետական սահմանին անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների ու այլ իրերի բացթողնման գործառույթների իրականացման հանրային հաշվետվողականության օրենսդրական ավելացում:*

*Օպերատիվ կառավարման կենտրոնի (ՕԿԿ) կողմից քաղաքացիների անձնական տվյալների հարգման օրենսդրական երաշխիքների ստեղծում:*

*Ոստիկանության մի շարք գործառույթների և քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ապառազմականացում և փոխանցում ՆԳՆ քաղաքացիական ծառայողներին:*

Հաստատվել է Պարեկային ծառայության կանոնադրությունը<sup>25</sup>, որը նախատեսում է այնպիսի գործողություններ, որոնք մարդու իրավունքների ոտնահարման հավանականությունը նվազեցնում են և բարձրացնում են հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը: Մասնավորապես՝ պարեկներն ունենալու են ժամանակակից տեխնիկական հագեցվածություն՝ վերնագգեստին փակցված տեսանկարահանող սարքեր, ինչը կարող է երաշխիք հանդիսանալ թե՛ մարդու իրավունքների ոտնահարումների նվազեցման, թե՛ հանցավորության կանխարգելման և թե՛ նրանց աշխատանքի մոնիտորինգի համար: «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն մշտադիտարկել է նաև դիմորդների բժշկական ստուգման, ֆիզկուլտուրայի քննությունների և համակարգչային թեստերի գործընթացները, որոնց ընթացքում կոռուպցիոն ռիսկեր կամ էական խախտումներ չեն հայտնաբերվել: Պարեկների վերապատրաստման դասընթացներում առանձնացված են մարդու իրավունքների վերաբերյալ մոդուլներ: Դասընթացների անցկացումն իրականացվելու է առանձին ընթացակարգով՝ մրցութային փուլերը հաղթահարած ու հետագա վերապատրաստումներն (ToT) անցած դասախոսական կազմի կողմից: Նախքան դասընթացների փուլը, պարեկային ծառայության ձևավորման միակ էական խնդիրը եղել է իգական սեռի դիմորդների (և, որպես արդյունք, ընտրված մասնակիցների) էական պակասը: Նախատեսված 230-ի փոխարեն դասընթացների փուլին հասել է իգական սեռի 52 ներկայացուցիչ: Նաև պետք է փաստել, որ ոստիկանական համակարգում վատ կոմիսնակացիայի արդյունքում ոստիկանության պարեկային ծառայության կրթության համար ընտրված ոստիկանության գործող մեծ թվով ծառայողներ ընդունվելուց հետո հրաժարվեցին:

Ներառականության մասին՝ Պարեկային ծառայողների հավաքագրումն իրականացվել է բաց մրցութային, որի հայտարարությունը<sup>26</sup> տրվել է 2020 թվականի հունիսի 6-ին թե՛ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի, թե՛ ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայք էջերում<sup>27</sup> և այլ հարթակներում: Մրցութային բոլոր փաստաթղթերի հաստատման, գործընթացի մշտադիտարկման ու վերջնականացման նպատակով ստեղծվել է Ընդունող հանձնաժողով, որում ներկայացված են գործադիր իշխանության, ոստիկանության, օրենսդիր մարմնի ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները (այդ թվում տվյալ մշտադիտարկման թիմի ներկայացուցիչ): ՊԾ դիմորդների ընդունելության քննությունների, ինչպես նաև հարցազրույցների

<sup>25</sup> Տե՛ս <http://www.irtek.am/views/act.aspx?aid=107472>

<sup>26</sup> Տե՛ս [https://www.youtube.com/watch?v=3Hx5pfZD5fc&feature=youtu.be&ab\\_channel=POLICERAV\\_ostikanutyun](https://www.youtube.com/watch?v=3Hx5pfZD5fc&feature=youtu.be&ab_channel=POLICERAV_ostikanutyun)

<sup>27</sup> Տե՛ս <https://www.moj.am/article/2755>

ողջ ընթացքը դիտորդական խմբերի, միջազգային կազմակերպությունների ու ՀԿ-ների համար եղել է բաց ու թափանցիկ: Չուզահեռ գործող հարցազրույցների՝ 7 հանձնաժողովներից յուրաքանչյուրում ներկայացված են եղել մեկական ներկայացուցիչներ ՀՀ ԱՆ-ից, ՀՀ ոստիկանությունից, միջազգային կազմակերպություններից, ՀԿ-ներից, ինչպես նաև մեկական հոգեբաններ:<sup>28</sup> Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և պարեկային ծառայության ստեղծման ընթացքը քննարկվել են քաղաքացիական հասարակության կողմից կազմակերպված երկու հանրային քննարկումներում<sup>29</sup>: Թեև 2020 թվականի հուլիսին ստեղծվել է ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհուրդ,<sup>30</sup> առ այսօր չի կայացել այդ մարմնի որևէ նիստ:

## Քրեական և քրեական դատավարության օրենսդրության բարեփոխումներ

### ▪ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը

*Գործողությունը՝ Մշակել և ԱԺ ներկայացնել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ:*

Նախագիծը մշակվել է Արդարադատության նախարարի 2019թ. ապրիլի 26-ի N 137-Ա հրամանով ստեղծված ՀՀ քրեական դատավարության նախագիծը մշակող աշխատանքային խմբի և Արդարադատության նախարարության կողմից: Ըստ ռազմավարությամբ հաստատված գործողությունների ծրագրերի ընթացքի վերաբերյալ հաշվետվության 2019թ. 2-րդ կիսամյակում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակվել է: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը քննարկվել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ<sup>31</sup>, ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակվել է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի բոլոր շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցված տարբերակը մշակված է, առկա է նախագծի վերաբերյալ ամփոփաթերթը:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: Հրապարակվել է քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը<sup>32</sup>:

Մասնավորապես նախատեսվում է՝ ա. վերացնել քրեական գործի հարուցման (նյութերի նախապատրաստման) փուլը. այն ներառել նախաքննության՝ որպես մինչդատական վարույթի իրականացման միակ եղանակի բովանդակության մեջ, բ. փոխել «հետաքննություն» և

<sup>28</sup> «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ից երկու հանձնաժողովներում ներկայացված են եղել Արտաշես Մերգոյանը և Արևիկ Միմոնյանը: Մյուս հանձնաժողովներում ՀԿ-ների ներկայացուցիչները եղել են «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակից», «Իրավաբանների հայկական ասոցիացիայից» և «Վարորդի ընկեր» ՀԿ-ից:

<sup>29</sup> Տե՛ս <https://www.facebook.com/events/747066252726007/>

<sup>30</sup> որում ներգրավվել են նաև «Իրազեկ քաղաքացիների միավորում», «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը», «Իրավաբանների հայկական ասոցիացիան» և «Վարորդի ընկեր» ՀԿ-ները:

<sup>31</sup> Տե՛ս [https://www.coe.int/hy/web/yerevan/news/-/asset\\_publisher/nZME1SRwKQhu/content/public-discussion-on-the-draft-criminal-procedure-code-of-the-republic-of-armenia?\\_101\\_INSTANCE\\_nZME1SRwKQhu\\_viewMode=view/](https://www.coe.int/hy/web/yerevan/news/-/asset_publisher/nZME1SRwKQhu/content/public-discussion-on-the-draft-criminal-procedure-code-of-the-republic-of-armenia?_101_INSTANCE_nZME1SRwKQhu_viewMode=view/)

<sup>32</sup> Տե՛ս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=58331> (հեղինակ՝ ՀՀ կառավարություն, ներկայացման ամսաթիվ՝ 03.06.2020թ., ընդգրկվել է նստաշրջանի օրակարգ՝ 17.11.2020թ. տե՛ս փաստաթղթի մասին՝ [http://www.parliament.am/draft\\_history.php?id=11685](http://www.parliament.am/draft_history.php?id=11685), նախագիծը՝ [http://www.parliament.am/draft\\_docs7/K-637.pdf](http://www.parliament.am/draft_docs7/K-637.pdf), <https://www.e-draft.am/projects/2085>)



«նախաքննություն» հասկացությունների քրեադատավարական հարաբերակցությունը, օպերատիվ-հետախուզական գործունեությունն ինկորպորացնել քրեական դատավարության օրենսգիրք՝ այն նույնացնելով հետաքննության հետ, գ. պաշտպանության կողմին վերապահել ապացույցներ ներկայացնելու իրավունք՝ մինչդատական վարույթում փաստաթղթեր և առարկաներ, իսկ դատարանում հետազոտման ենթակա ապացույցների ցանկ ներկայացնելու ձևով, դ. հստակեցնել հարկադրանքի միջոցների, ներառյալ՝ ձերբակալման և կալանքի կիրառման նպատակը, հիմքերը և ընթացակարգերը, ե. ընդլայնել և օպտիմալացնել խափանման միջոցների շրջանակը, գ. դատական վերահսկողությունը տարածել բնակարանում կատարվող բոլոր քննչական գործողությունների, ինչպես նաև գույքի արգելադրման վրա, հստակեցնել մինչդատական վարույթում դատական պաշտպանության սահմանները, է. դատավարական հիմնական ժամկետների հաշվարկի և խափանման միջոցների կիրառման համար որպես նախապայման սահմանել հսկող դատախազի կողմից անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը, ը. սահմանել ռեաբիլիտացիայի ինստիտուտ, նախատեսել տվյալ քրեական վարույթի շրջանակներում արդարացվածի կրած վնասների հատուցման հնարավորություն, թ. մեղադրյալին զրկել սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության անձեռնմխելիությունից՝ հնարավորություն ընձեռնելով նրան պահպանել լռություն կամ տալ ճշմարտացի ցուցմունք, ժ. նախատեսել մինչդատական վարույթի ընթացքում դատավորի ներկայությամբ անձին հարցաքննելու (ցուցմունքը դեպոնացնելու) ընթացակարգ, ի. նախատեսել նոր տարբերակված վարույթներ՝ մասնավոր մեղադրանքով վարույթ (առանց նախաքննության), համագործակցության վարույթ, իրավաբանական անձի վերաբերյալ վարույթ և այլն, լ. սահմանել նախնական դատական լսումների ընթացքում քննարկման ենթակա առանցքային հարցերի քննության և լուծման արդյունավետ կարգ՝ մրցակցության և կողմերի հավասարության պայմաններում, խ. դատարանին վերապահել ինքնուրույն արբիտրի դեր, որը կաշկանդված չէ կողմերի դիրքորոշմամբ և իրավասու է միջամտել ապացուցման գործընթացին կամ ուղղորդել այն՝ ելնելով արդարադատության շահից, ծ. ամրապնդել դատարանում ապացույցների հետազոտման անմիջականության և թափանցիկության սկզբունքները, կ. հստակեցնել առաջին ատյանի դատարանում դատաքննության սահմանները, բարեփոխել դատարանում դատախազի կողմից մեղադրանք փոփոխելու կարգը, հ. նախատեսել դատական ակտի կայացման երկփուլ կարգ, ձ. ամրապնդել դատական ակտերի սահմանափակ վերանայման սկզբունքը, առանձին բացառություններով, հստակեցնել հիմնարար խախտումներով վարույթի նորոգման հիմքերը և կարգը, դ. վերացնել դատական ակտերի կատարումը՝ որպես քրեական վարույթի փուլ:

Հաշվի առնելով այն, որ ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի նախագծերը կրկին դրվել են շրջանառության մեջ, հանրային քննարկումների փուլ անցել և բավական լրամշակվել, ուստի, հնարավոր չի եղել այդ պահի դրությամբ առկա տեքստով վերապատրաստումներ անցկացնել: Ներկա դրությամբ որդեգրվել է հետևյալ քաղաքականությունը՝ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի վերջնական ընդունումից հետո՝ մինչև նշված օրենսգրքերն ուժի մեջ մտնելը (առնվազն մեկ տարի), կնշակվեն համապատասխան վերապատրաստման ծրագրեր և ըստ այդմ քրեական վարույթի հանրային մասնակիցների և դատավորների համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ:

*(հավելում՝ ԹԻ կողմից)* Քրեական դատավարության օրենսգրքի նախագծով մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների և երաշխիքների տեսանկյունից արձանագրվել է առաջընթաց: Մասնավորապես, նախագծով ամրագրվել է տնային կալանք խափանման միջոցը, որն էականորեն կբարելավի քրեական քաղաքականության արդյունավետությունը, կնպաստի նաև կալանավարների անհարկի ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև կնպաստի ազատության սահմանափակման ծայրահեղ միջոց հանդիսացող կալանք խափանման միջոցին էական այլընտրանքի ձևավորումը: Լրացուցիչ իրավակարգավորումներ են նախատեսված բերման ենթարկելու ինստիտուտի

վերաբերյալ: Մասնավորապես, այն դիտարկվել է որպես դատավարական սանկցիա և նախատեսվել են կառուցակարգեր՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանը:

▪ **Փաստաբաններին խուզարկելը և փաստաբան-վստահորդ հաղորդակցության պաշտպանվածությունը**

*Գործողությունը՝ Ընդունել օրենսդրություն, որով պաշտոնատար անձանց կարգելի խուզարկել փաստաբաններին վերջիններիս մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում, բացառությամբ երբ դա ունի հստակորեն ձեւակերպված հիմքեր եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում իրավաչափ նպատակն ապահովելու համար, և չի խաթարում ամբաստանյալի արդար դատաքննության իրավունքը և հատկապես փաստաբան-վստահորդ հաղորդակցության պաշտպանվածությունը:*

Գործող քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանում է՝ փաստաբանի բնակարանը, տրանսպորտային միջոցը կամ գրասենյակը, ինչպես նաև փաստաբանական կազմակերպության գրասենյակը չեն կարող խուզարկվել փաստաբանական գործունեության հետ առնչվող հանգամանքները պարզելու կապակցությամբ: Չի թույլատրվում փաստաբանին խուզարկել իր մասնագիտական պարտականություններն անմիջականորեն կատարելիս: Այս գործողությունն առաջարկվել է ԲՀԿ-ների կողմից, սակայն չի ընդունվել Կառավարության կողմից: Այս գործողության վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն առկա չէ:

▪ **Դատավորի կողմից փաստաբանի նկատմամբ տուգանք նշանակելու լիազորությունը**<sup>33</sup>

*Գործողությունը՝ Կատարել փոփոխություններ դատավարական օրենսգրքերում վերացնելու համար դատավորի կողմից փաստաբանի նկատմամբ տուգանք նշանակելու լիազորությունը:*

ՀՀ Արդարադատության նախարարություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքով, ընդունված՝ 2018թ. փետրվարի 9-ին, Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 314.2-րդ և 314.3-րդ հոդվածներով՝ ա. հոդված 314.2. Նկատողություն և դատական նիստերի դահլիճից հեռացում կիրառելու առանձնահատկությունները, բ. հոդված 314.3. Դատական տուգանք կիրառելու առանձնահատկությունները: Սահմանվեց, որ գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ դատական տուգանքը որպես դատական սանկցիա կիրառելու վերաբերյալ դրույթները գործում են 2019թ. հունվարի 1-ից: Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով<sup>34</sup> էլ ավելի խիստ կարգավորումներ են նախատեսված՝ ա. հոդված 147. Վարույթից հեռացնելը (i. վարույթին մասնակցող փաստաբանը, լիազոր ներկայացուցիչը կամ օրինական ներկայացուցիչը, ինչպես նաև հանրային մեղադրողը վարույթն իրականացնող մարմնի հիմնավոր որոշմամբ կարող է հեռացվել վարույթից, եթե՝ երկու անգամ առանց հարգելի պատճառի չի ներկայացել դատական նիստին կամ իր համար պարտադիր վարույթային գործողության կատարմանը կամ սույն գլխով սահմանված կարգով երեք անգամ դատավարական սանկցիայի ենթարկվելուց հետո շարունակում է չարամտորեն չկատարել իր պարտականությունները: Այս գործողության վերաբերյալ հավելյալ

<sup>33</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, Հոդված 314.1. Դատական սանկցիաները և դրանց կիրառման ընդհանուր կարգը:

<sup>34</sup> Տե՛ս [http://www.parliament.am/draft\\_docs7/K-637.pdf](http://www.parliament.am/draft_docs7/K-637.pdf)

տեղեկատվություն առկա չէ: Քրեական դատավարության նոր օրենսգիրքը ընդգրկված է ԱԺ օրակարգում:

- **Անկախ փորձագետին դիմելու և փորձագիտական կարծիքը դատարանում որպես ապացույց օգտագործելու իրավունքը**

*Գործողությունը՝ 33 քրեական դատավարության օրենսգրքով ապահովել, որպեսզի անձինք, ում իրավունքները խախտվել են, հնարավորություն ունենան դիմելու անկախ փորձագետին և օգտագործելու փորձագիտական կարծիքը որպես ապացույց դատարանում:*

Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով<sup>35</sup> նախատեսվում է նշված կարգավորումը: Հոդված 86. Ապացույցի տեսակները, քրեական վարույթում ապացույց են՝ ձեռքակալվածի ցուցմունքը, մեղադրյալի ցուցմունքը, տուժողի ցուցմունքը, վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը, փորձագետի կարծիքը, փորձագետի ցուցմունքը, իրեղեն ապացույցները, ապացուցողական և վարությանին այլ գործողությունների արձանագրությունները, արտավարությանին փաստաթղթերը: Հոդված 92. Փորձագետի կարծիքը՝ փորձագետի կարծիքը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ որևէ այլ բնագավառում հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ վարույթի մասնավոր մասնակցի կողմից իրեն առաջադրած, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի վերաբերյալ գրավոր հիմնավորված հետևություններն են, որոնց փորձագետը հանգել է՝ առանց վարույթի համապատասխան նյութերը, դիակը կամ վարույթին ներգրավված համապատասխան անձին հետազոտելու: Հրապարակվել է քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը 04.06.2020թ.-ին<sup>36</sup>: Դեռևս չի ընդունվել:

- **21 (քսանմեկ) տարին չըրացած անձանց ցմահ ազատազրկումը**

*Գործողությունը՝ 33 քրեական օրենսգրքով սահմանել, որ ցմահ ազատազրկման չեն կարող դատապարտվել հանցանքը կատարելիս քսանմեկ տարին չըրացած անձինք:*

Ինչպես գործող ՀՀ քրեական օրենսգրքով (հոդված 60), այնպես էլ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծով (հոդված 67) ցմահ ազատազրկման շեմը 18 տարեկանն է: Սակայն, ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծով՝ հաշվի առնելով անչափահասների տարիքային առանձնահատկությունները, ինչպես նաև նրանց ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական բնականոն զարգացումը ապահովելու, նրանց դատախարակելու և այլ անձանց բացասական ազդեցությունից պաշտպանելու նպատակով՝ ըստ տարիքային խմբերի սահմանվել է անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու առանձնահատկությունները: Նախատեսվել է, որ մինչև 16 (տասնվեց) տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չեն կարող գերազանցել օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված պատժի առավելագույն և նվազագույն ժամկետի կամ չափի մեկ երրորդը: Տասնվեցից մինչև 18 (տասնութ) տարին լրանալը հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը կրճատվում են մեկ երկրորդով: Կարճաժամկետ ազատազրկումը անչափահասի նկատմամբ նշանակվում է միայն այն դեպքում, երբ ավելի մեղմ պատժատեսակը չի կարող նպաստել պատժի նպատակների իրականացմանը, իսկ ազատազրկումը՝ երբ ոչ մի այլ միջոց չի կարող

<sup>35</sup> Տե՛ս [http://www.parliament.am/draft\\_docs7/K-637.pdf](http://www.parliament.am/draft_docs7/K-637.pdf)

<sup>36</sup> Տե՛ս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=58331>, [http://www.parliament.am/draft\\_docs7/K-637.pdf](http://www.parliament.am/draft_docs7/K-637.pdf), <https://www.e-draft.am/projects/2085>

ապահովել պատժի նպատակների իրականացումը<sup>37</sup>: Միաժամանակ, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տասնութից 21 (քսանմեկ) տարեկան անձինք, պայմանավորված իրենց հասունացման, հոգեկան զարգացման աստիճանով, այլ անձանց ազդեցությանը ենթարկվելու հակումով ավելի շատ նմանություններ ունեն անչափահասների հետ՝ անկախ փաստացի տարիքից, նախատեսվել են նաև նրանց նկատմամբ պատիժ նշանակելու առանձնահատկություններ: Նշված առանձնահատկությունները կիրառելիս հաշվի են առնվելու նաև վերջիններիս առողջության վիճակը, կյանքի և դաստիարակության պայմանները: Բացի այդ, անչափահասը (հանցագործության պահին 14 (տասնչորս) տարին լրացած, սակայն տասնութ տարին չլրացած անձը) կամ քսանմեկ տարին չլրացած անձն առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելու համար մեղադրվելու դեպքում ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հիմնավորվում է, որ պատժի նպատակների իրականացումը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով: Համապատասխանաբար, մինչև տասնութ տարին լրանալը հանցանք կատարած անձին վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելիս վաղեմության ժամկետները կրճատվելու են կիսով չափ, իսկ տասնութից մինչև քսանմեկ տարին լրանալը հանցանք կատարած անձանց դեպքում՝ մեկ երրորդի չափով: Ընդունվել է առաջին ընթերցմամբ 09.12.2020թ.: ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը կընդգրկվի (03.12.2020թ.) 2020թ. դեկտեմբերի 8-ից գումարվող ԱԺ հերթական նիստերի օրակարգում<sup>38</sup> (երկրորդ ընթերցում):

▪ **Հատուկ Քննչական Ծառայության օպերատիվ հետախուզական գործողություններ իրականացնելու լիազորությունը**

*Գործողությունը՝ Կատարելագործել օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման, ձեռք բերված տվյալների օգտագործման օրենսդրական հիմքերը և չափանիշները՝ միջազգային չափանիշներին համապատասխան:*

Համաձայն օպերատիվ-հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝ ա. օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու իրավունք ունեն՝ ոստիկանությունը (ռազմական ոստիկանությունը), ազգային անվտանգության մարմինները, հարկային մարմինները, մաքսային մարմինները (մաքսանենգության և այլ հանցագործությունների խափանման ու բացահայտման նպատակով), քրեակատարողական ծառայությունը՝ միայն քրեակատարողական հիմնարկներում: Սույն գործողության վերաբերյալ առկա չէ տեղեկատվություն:

▪ **Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը**

*Գործողությունը՝ Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության և հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրության իրականացում, ուսումնասիրության արդյունքներով համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարում:*

ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ փաստաբանների պալատ (համաձայնությամբ): Ըստ ռազմավարությամբ հաստատված գործողությունների ծրագրերի ընթացքի վերաբերյալ հաշվետվության. 2020թ. 1- ին կիսամյակում Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության և

<sup>37</sup> Տե՛ս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11680&Reading=0>

<sup>38</sup> Տե՛ս [http://www.parliament.am/draft\\_docs7/K-634\\_K-734\\_grutyun.pdf](http://www.parliament.am/draft_docs7/K-634_K-734_grutyun.pdf)

հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրությունն իրականացվել է, մշակվել է համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: 2020թ. 2-րդ կիսամյակում կատարվել է Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, փաստաբանների մասնագիտական վերապատրաստման արդիականացված ծրագրերի, ինչպես նաև որակավորման քննության կատարելագործված կարգերի ներդրում: Համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագիծը մշակված է և ներկայացվել է ԱԺ: Մշակվում է անվճար իրավաբանական օգնություն ստանալու մեխանիզմների ընդլայնմանն ուղղված նախագիծ, ինչպես նաև մշակվում է ոլորտի բարեփոխման հայեցակարգային փաստաթուղթ: Աշխատանքների իրականացման ընթացքը ձգձգվել է նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով: Խնդիր է անընդհատ աճող գործերի թվի համեմատ հանրային պաշտպանների անհամեմատ ցածր թիվ, ինչպես նաև հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների ոչ բավարար լինելը: Նախագծի վերաբերյալ այլ տեղեկատվություն առկա չէ:

#### ▪ **Անձի ձերբակալման ժամկետի հաշվարկը**

*Գործողությունը՝ Ապահովել ձերբակալման ժամկետի հաշվարկը անձի փաստացի ազատության զրկման պահից՝ միջազգային չափանիշներին համապատասխան:*

ՀՀ Արդարադատության նախարարությունը գործնականում անձին ազատությունից փաստացի զրկման հստակ ընթացակարգ գոյություն չունի, որի շրջանակներում կապահովվեին ներգործության այդ միջոցի կիրառման իրավաչափության բոլոր երաշխիքները: ՀՀ սահմանադրական դատարանն իր 2017թ. հունվարի 24-ի ՄԴՈ-1339 որոշմամբ<sup>39</sup> գտել է, որ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածում երաշխավորված՝ անձնական ազատության իրավունքին միջամտությունն սկսվում է անձնական ազատությունից փաստացի զրկելու պահից, անկախ այն հանգամանքից, թե ինչ եղանակով է տեղի ունենում՝ «խախտողի բերման», «վարչական ձերբակալման» թե «բերման ենթարկելու» միջոցով: Ազատությունից փաստացի զրկելու պահից անձի համար գործում են այդ անձանց համար Սահմանադրությամբ ամրագրված հիմնարար իրավունքները, անկախ նրանից՝ դրանք արտացոլված են վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունում, թե՛ ոչ, որովհետև ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով նախատեսվել է հետևյալ կարգավորումը՝ անձը համարվում է ձերբակալված նրան ազատությունից փաստացի զրկելու պահից: Ձերբակալման՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետը հաշվարկվում է նույն պահից: Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը հրապարակվել է 04.06.2020թ.,<sup>40</sup> դեռևս չի ընդունվել<sup>41</sup>:

#### ▪ **Փակ և կիսափակ հաստատություններում քաղաքացիական դիտորդական խմբերի մշտադիտարկումը**

<sup>39</sup> Տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docid=111382>

<sup>40</sup> Տե՛ս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=58331>, [http://www.parliament.am/draft\\_docs7/K-637.pdf](http://www.parliament.am/draft_docs7/K-637.pdf), <https://www.e-draft.am/projects/2085>

<sup>41</sup> Տե՛ս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=58331>

*Գործողությունը՝ Բոլոր փակ և կիսափակ հաստատություններում ապահովել քաղաքացիական դիտորդական խմբերի կողմից անարգել մշտադիտարկում իրականացնելու հնարավորությունը:*

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի (այսուհետ՝ Խումբ) գործունեությունը կանոնակարգվում էր ՀՀ արդարադատության նախարարի 2005թ. նոյեմբերի 18-ի թիվ ԲՀ-66-Ն հրամանով սահմանված Խմբի կարգով<sup>42</sup>: 2020թ. մարտի 20-ին ՀՀ արդարադատության նախարարի թիվ 126-Ն հրամանով Խմբի Կարգը ենթարկվեց փոփոխության: Չնայած, մինչև Կարգի փոփոխությունը ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչների և Խմբի անդամների միջև տեղի ունեցած քննարկումներին և նոր Կարգի նախագծի վիճահարույց դրույթների շուրջ համաձայնությանը, նախարարությունը ընդունել է նոր Կարգը<sup>43</sup>, որում տեղ են գտել բազմաթիվ վիճահարույց դրույթներ: Մասնավորապես, նոր կարգով սահմանվել է Դիտորդների կողմից ցանկացած պահին՝ ցանկացած օր և ցանկացած ժամի, քրեակատարողական հիմնարկներ անարգել այցելելու լիազորությունը (*Խմբի անդամը ոչ աշխատանքային ժամերին քրեակատարողական հիմնարկներ կարող է այցելել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշմամբ*): Սահմանափակվել է նաև համապատասխան մասնագիտական ուղղվածությամբ փորձագետների ներգրավման հնարավորությունը: Եթե անձը բարձրակարգ հոգեբան, կոռուպցիայի գծով մասնագետ կամ սոցիոլոգ է և ցանկություն է հայտնում կամավորության սկզբունքներով աջակցել խմբին և ներդրում ունենալ, ապա չի կարող ընդգրկվել խմբում որպես փորձագետ, քանի որ հասարակական կազմակերպության անդամ չէ, քրեակատարողական ոլորտում փորձ չունի և պարտադիր պետք է մասնակցի մրցույթի (*փորձագետների համար առաջադրվում է նույն պահանջը, ինչ անդամների համար*): Նոր կարգում առկա են նաև բազմաթիվ խնդիրներ Խմբում նոր անդամ ընդունելու պահանջների, ընթացակարգի և այլ հարցերի շուրջ: Նման կարգավորումներ կիրառելիս նախագիծը մշակողներն անտեսել են Խմբի հետ ձեռք բերված ընդհանուր պայմանավորվածությունները: Խմբի անդամները մի քանի անգամ դիմել են ՀՀ արդարադատության նախարարին հանդիպելու և առկա խնդիրները քննարկելու առաջարկով, սակայն մինչև օրս որևէ հանդիպում չի կայացել: Մտահոգիչ է այն, որ Խմբի քննարկումների արդյունքում չի պահպանվել ձեռք բերված ընդհանուր փոխհամաձայնությունը և այս հանգամանքը ՀՀ արդարադատության նախարարությանը դարձնում է ոչ հուսալի և ոչ վստահելի գործընկեր: Սույն գործողության մասով 2019-2020թթ.-ի կատարված գործողությունները կարող ենք գնահատել բացասական և իրավիճակն էլ ավելի վատթարացնող, ինչպես օրենսդրական, այնպես էլ վարքային տեսանկյունից: Այլ նախագծերի կամ գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:

## Վարչական արդարադատության և վարչական վարույթի բարեփոխումներ

- ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը

*Գործողությունը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ նախատեսելով Վճռաբեկ դատարանի վարչական պալատ:*

<sup>42</sup> Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=35950>

<sup>43</sup> Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140628>



[www.e-draft.am](http://www.e-draft.am) կայքում դեռևս 2019թ. մարտի 27-ին հանրային քննարկման են տեղադրվել «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը<sup>44</sup>: Նախագծերը քննարկման են դրված եղել 27.03.2019-11.04.2019թթ: Դրանց քննարկման գործընթացը մասնակցային կարող են համարվել այնքանով, որ օգտատերերը հնարավորություն են ունեցել թողնել առաջարկություններ: Սակայն ամփոփաթերթում նշումներ չկան առաջարկի ընդունման կամ մերժման առնչությամբ: Նախագծով նախատեսվում էր Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի հիման վրա ստեղծել երկու ինքնուրույն, առանձին մասնագիտացումներ ունեցող պալատներ, կարգավորվում էին Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատների կազմավորման և բնականոն գործունեության մեկնարկի հետ կապված հարցեր: Նախատեսվում էր, որ Վճռաբեկ դատարանում գործելու է վարչական պալատ՝ 5 (հինգ) դատավորի կազմով, իսկ քաղաքացիական պալատը՝ 7 (յոթ) դատավորի կազմով: Միևնույն ժամանակ նախագծի անցումային դրույթներում սահմանվում էր, որ՝ ա. օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատում պաշտոնավարում են Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի այն դատավորները, ովքեր ունեն միայն քաղաքացիական մասնագիտացման դատավորի փորձառություն, բ. օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից Վճռաբեկ դատարանի վարչական պալատում պաշտոնավարում են Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի այն դատավորները, ովքեր ունեն վարչական կամ տնտեսական դատարանում դատավորի փորձառություն, գ. օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահը պաշտոնավարում է որպես Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ: Ըստ ուսումնասիրությունների՝ նախագիծը ԱԺ չի ներկայացվել: Մասնագիտացված վարչական պալատ ունենալու գաղափարը ինքնին ողջունելի է, սակայն այն, թե ինչ մեխանիզմով էր նախագիծը փորձում ստեղծել այն խնդրահարույց: Այսպես՝ ի՞նչ սկզբունքով էր որոշվել, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահը պաշտոնավարելու էր որպես Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ: Նշվածը խնդրահարույց է՝ հատկապես հաշվի առնելով, որ գործող քաղաքացիական և վարչական պալատի նախագահը, չունի վարչական մասնագիտացում, հանդիսանում է նախկին Տնտեսական դատարանի դատավոր<sup>45</sup>: Միևնույն ժամանակ նախագծի անցումային դրույթներում սահմանված կետերը ենթադրում են, որ Վճռաբեկ դատարանի վարչական պալատում պաշտոնավարելու են ներկայիս քաղաքացիական և վարչական պալատի այն դատավորները, որոնք ունեն վարչական կամ տնտեսական դատարանում դատավորի փորձառություն, ինչը ենթադրաբար արվում է ներկայիս պալատի դատավորներին հետագայում պաշտոնավարումը շարունակելու հնարավորություն տալու նպատակով՝ հաշվի առնելով, որ գործող պալատի դատավորների մի մասը չունեն վարչական մասնագիտացում և տնտեսական դատարանի նախկին դատավորներ են: Սա խնդրահարույց է այնքանով, որ ըստ էության նեղ մասնագիտացում ունեցող դատավորների ներգրավումը մոտակա ժամանակներում բացառվելու էր, իսկ փոփոխությունը՝ լինել աննպատակ: Նախագիծը մշակվել է Արդարադատության նախարարության կողմից:

*Գործողությունը՝ 33 վարչական դատավարության օրենսգրքում և 33 քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ: Արդյունքը՝ «33 վարչական դատավարության օրենսգրքում*

<sup>44</sup> Տե՛ս <https://www.e-draft.am/projects/1590/about>

<sup>45</sup> Ըստ <https://helpcourt.am/> կայքի տվյալների

*փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և դրանով կարգավորվել է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման ընդդատության հարցը:*

ՀՀ սահմանադրական դատարանը 22.01.2019թ. թիվ ՄԴՈ-1439 որոշմամբ արձանագրել է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման վարույթի ենթակայության անորոշություններ և Ազգային ժողովի կողմից դրա հաղթահարման անհրաժեշտությունը: Մասնավորապես Սահմանադրական դատարանը նշել է, որ մինչև Ազգային ժողովի կողմից սույն որոշմամբ արտահայտված առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, քանի դեռ պատժի կատարման հետ կապված կոնկրետ գործի, նյութի կամ հարցի քննության իրավասությունն օրենքով հստակ վերապահված չէ քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանին: Արդեն 2019թ. ապրիլի 12-ին [www.e-draft.am](http://www.e-draft.am) էլ. հարթակում քննարկման դրվեցին «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը<sup>46</sup>, որոնցով սահմանվում էր, որ Քրեական դատավարության օրենսգրքում ավելացնել 438.1. հոդվածը՝ Պատիժները կատարող մարմինների, հիմնարկների, պաշտոնատար անձանց գործողության, անգործության կամ ընդունած ակտերի դեմ դատարան բողոքներ ներկայացնելու հնարավորության նախատեսմամբ: Միևնույն ժամանակ Քրեակատարողական օրենսգրքում նախատեսվում էր կատարել փոփոխություն, ըստ որի՝ պաշտոնատար անձանց գործողության, անգործության կամ ընդունած որոշման դեմ բողոք կարող է ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկի պետին կամ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետին կամ ՀՀ արդարադատության նախարարին կամ դատարան: Նախագիծը հանրային քննարկման է դրված եղել 12.04.2019-27.04.2019թթ.՝ 15-օրյա ժամկետով: Նախագծի՝ ԱԺ օրակարգում ներառելու, քննարկման կամ ընդունման մասին որևէ տեղեկություն առկա չէ: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման վարույթի ենթակայության և գործի քննության ընթացակարգի հստակեցմանն ուղղված որևէ այլ օրենսդրական նախաձեռնություն այս պահին չկա: Նախագծով առնվազն կարգավորվում էր ՔԿԸ որոշումների, գործողությունների կամ անգործությունների բողոքարկման ենթակայության հարցը: Ողջունելի էր նախագծում ներկայացված դրույթը ըստ որի՝ պաշտոնատար անձանց գործողության, անգործության կամ ընդունած որոշման դեմ ներկայացված բողոքները դատարանի կողմից քննվելու էին սեղմ ժամկետում՝ բողոքը ստանալուց հետո տասն օրվա ընթացքում՝ հաշվի առնելով գործերի հնարավոր առանձնահատկությունները: Այնուամենայնիվ ոլորտում փոփոխությունների իրականացումը հրամայական է՝ հաշվի առնելով, որ ներկայումս նշված գործերը քննվում են Վարչական դատարանի դատավորների կողմից, ովքեր չունեն համապատասխան մասնագիտացում և չեն անցել վերապատրաստումներ, ինչը կարող է հանգեցնել դատավարական ժամկետների անհիմն ձգձումից մինչև գործի սխալ լուծում: ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից 1955թ. օգոստոսի 30-ին ընդունված՝ «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» 36-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝

<sup>46</sup> Տե՛ս <https://www.e-draft.am/projects/1628/about>



ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ պետք է հնարավորություն ունենա բողոքներով և պահանջներով դիմելու քրեակատարողական մարմիններին, դատական իշխանություններին կամ այլ իրավասու մարմիններին: Առկա իրավիճակում, երբ Վարչական դատավարության օրենսգրքում (հոդված 10) հստակ սահմանված է, որ Վարչական դատարանին ընդդատյա չեն պատժի կատարման հետ կապված գործերը, իսկ Քրեական դատավարության օրենսգիրքը (հոդված 41) Դատարանի լիազորությունների ցանկում չի նախատեսել Քրեակատարողական հիմնարկների որոշումների, գործողությունների կամ անգործության բողոքներ քննելու լիազորություն, ազատությունից զրկված անձինք զրկված են արդյունավետ դատական պաշտպանության մեխանիզմներից, ուստի նշված ոլորտի կարգավորումը հրամայական է: Քննարկվող նախագծի հեղինակը եղել է Արդարադատության նախարարությունը:

▪ **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ծանուցումների նոր ընթացակարգերը**

*Գործողությունը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով ծանուցումների նոր ընթացակարգեր:*

Վարչական դատավարությունում ծանուցումների գործող համակարգի պարագայում դատարանը պարտավոր է յուրաքանչյուր գործով յուրաքանչյուր դատավարական գործողության մասին հիմնականում փոստի միջոցով ծանուցել դատավարության մասնակցին: Ծանուցագրի հանձնումն իրականացվում է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Դատավարության մասնակիցները կարող են համաձայնվել ծանուցման այլ եղանակի մասին, մասնավորապես ֆաքսով, էլեկտրոնային փոստով, հեռախոսով, հեռագրով: Իրավաբանական անձանց ծանուցումը կատարվում է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով: Ծանուցումների այլ կարգավորումներ նախատեսող «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը էլեկտրոնային եղանակով դրվել է հրապարակային քննարկման<sup>47</sup> 17.12.2019 - 03.01.2020թթ: Նախագծով առաջարկվում է Օրենսգրքի 11-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ, նախատեսել Դատավարության մասնակիցների՝ դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցելու կարգ: Դատական ծանուցագիրը՝ ա. ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, բ. հանձնվում է առձեռն, գ. ուղարկվում է էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ սույն օրենսգրքի 64.1-րդ հոդվածով սահմանված կարգով: Նախատեսվում է նաև, որ Դատական նիստի ժամանակի և վայրի մասին դատավարության մասնակիցը կարող է ծանուցվել դատական ծանուցագիրն առձեռն հանձնելու միջոցով: Դատական ծանուցագիրն առձեռն հանձնվում է դատավարության մասնակցին դատարանի աշխատակազմի միջոցով: Դատավարության մասնակցի ներկայացուցչի կամահայտնության դեպքում դատական ծանուցագրի հանձնումը դատավարության մասնակցին դատարանի համաձայնությամբ կարող է իրականացվել իր միջոցով՝ պահպանելով սույն օրենսգրքի պահանջները: Եթե դատարանի կողմից այլ ժամկետ չի սահմանվել, ապա մեկշաբաթյա ժամկետում հետադարձ ծանուցումը դատարանում չստացվելու դեպքում ծանուցագրի հանձնումն իրականացվում է դատարանի աշխատակազմի միջոցով: Դատական ծանուցագիրն առձեռն հանձնելու դեպքում գործին կցվում է այն հանձնելու փաստը հաստատող փաստաթուղթ: Նախատեսվում է կարգավորել նաև դատական ծանուցագիրը էլեկտրոնային հաղորդակցության

<sup>47</sup> Տե՛ս <https://www.e-draft.am/projects/2189>

միջոցով ուղարկելը: Պետական և տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական անձին, անհատ ձեռնարկատիրոջը, ինչպես նաև դատավարության մասնակցի՝ փաստաբանի կարգավիճակ ունեցող ներկայացուցչին հասցեագրված դատական ծանուցագիրն ուղարկվում է նրա պաշտոնական էլեկտրոնային փոստին, բացառությամբ այն դեպքերի, երբ նման եղանակով ծանուցում իրականացնելն անհնար է: Դատավարության մասնակիցները դատարանին կարող են գրավոր ներկայացնել իրենց հաղորդակցության միջոցները՝ միջնորդելով ծանուցումը կատարել այդ միջոցով: Նախագիծը ԱԺ օրակարգում ներառելու, քննարկման կամ ընդունման մասին որևէ տեղեկություն առկա չէ: Ըստ Էության փոփոխություններն առաջարկվել են՝ հաշվի առնելով որոշ դեպքերում գործերով կողմերին ծանուցելու հետ կապված խնդիրները և Վարչական դատարանի առջև դրված խնդիրների լուծումը: Պրակտիկայում դատական կազմերը երբեմն ստիպված են լինում ցանկացած հնարավոր եղանակ օգտագործել՝ հատկապես անբարեխիղճ դատավարության մասնակցի պատշաճ ծանուցված լինելու իրավունքն ապահովելու համար, հատկապես հաշվի առնելով, որ միայն պատշաճ ծանուցված չլինելու հանգամանքն ինքնին կարող է դրվել դատական ակտը հետագայում բեկանելու հիմքում: Ընդհանրապես՝ ծանուցումների էլեկտրոնային պարտադիր մեխանիզմներ սահմանելու գաղափարը ողջունելի է, քանի որ թեև որոշ դատավորներ ակտիվ գործարկում են Օրենսգրքում առկա՝ ծանուցման այլ եղանակներից օգտվելու հնարավորությունը և կողմերին, հատկապես փաստաբան ներկայացուցիչներին առաջարկում հետագա դատավարական փաստաթղթերի և ծանուցումների ստացումը իրականացնել էլեկտրոնային եղանակով, այնուամենայնիվ սա ընտրողական բնույթ է կրում: Նախագծի հեղինակն Արդարադատության նախարարությունն է:

**▪ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում գրավոր և պարզեցված նոր վարույթները**

*Գործողությունը՝ 33 վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով գրավոր և պարզեց ված նոր վարույթներ*

«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը էլեկտրոնային եղանակով դրվել է հրապարակային քննարկման 17.12.2019-03.01.2020թթ: Նախագծով նախատեսվում է վարչական դատավարության օրենսգրքում ներդնել պարզեցված վարույթ: Նախագծի Նպատակը առանձին գործերի քննությունն ավելորդ դատավարական փուլերով չծանրաբեռնելու միջոցով դատավարական խնայողության սկզբունքի կենսագործումն է: Նախատեսվում է, որ Վարչական դատարանը վարչական գործը քննում է պարզեցված վարույթի կարգով, եթե վիճարկվող վարչական ակտով զանձման ենթակա գումարը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը: Վարչական դատարանը պարզեցված վարույթի կարգով կարող է քննել նաև այլ գործեր հետևյալ դեպքերում՝ ա. առկա է դատավարության բոլոր մասնակիցների միջնորդությունը՝ գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին, բ. դատավարության բոլոր մասնակիցների կողմից ներկայացվել է գործն իրենց բացակայությամբ և ներկայացված նյութերի հիման վրա քննելու մասին միջնորդություն, գ. մինչև դատաքննություն նշանակելը դատավարության որևէ մասնակից չի առարկել հայցի դեմ կամ չի ներկայացվել հակընդդեմ հայց, դ. հայցի առարկայի փոփոխության արդյունքում վիճարկվող վարչական ակտերով զանձման ենթակա գումարը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը: Նախագիծը ԱԺ նախագծերի որևէ բաժնում չի ներառվել:

Արդեն 25.11.2020-10.12.2020թթ. հրապարակային քննարկման <sup>48</sup> է դրվել «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով՝ օրենսգրքում ներդրվում են գրավոր ընթացակարգեր, նախատեսվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123.3-րդ հոդվածով, 123.5-րդ հոդվածի 1-2-րդ մասերով, 123.6-րդ, 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ և 124.7-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության պարտադիր գրավոր ընթացակարգ, եթե առկա չեն գրավոր ընթացակարգը բացառող հիմքեր, այլ վարչական գործերի քննության դեպքում ևս նախատեսվել է գրավոր ընթացակարգ կիրառելու վարչական դատարանի հայեցողություն, վարչական վերաքննիչ դատարանին տրված է հնարավորություն Վարչական դատարանում գրավոր ընթացակարգով քննության արդյունքում կայացված դատական ակտերի վերանայումն իրականացնել գրավոր ընթացակարգով: Նախատեսվում է գրավոր ընթացակարգով իրականացնել ճանապարհային երթևեկության անվտանգության կանոնների խախտման առնչությամբ հարուցվող վարույթները (մասամբ), ինչպես նաև համայնքային վճարովի ավտոկայանատեղիներում կայանելիս տեղական տուրքը չվճարելու առնչությամբ հարուցված գործերը, ինչը ողջամիտ է՝ հաշվի առնելով այն դատական պրակտիկան, ըստ որի՝ նման գործերով միանգամից նշանակվում է դատաքննություն, քանի որ հայցի հիմքերը Դատարանին մեծամասամբ պարզ են լինում, իսկ դատական քննությանը չեն ներկայանում ոչ հայցվոր, և ոչ էլ պատասխանող կողմերը: Նման գործերով պատասխանատու վարչական մարմինները մեծամասամբ նույնիսկ չեն ներկայացնում հայցի դեմ պատասխան կամ որևէ առարկություն: Միևնույն ժամանակ սահմանվում է, որ Վարչական դատարանը կարող է գրավոր ընթացակարգով քննել նաև այլ գործեր, եթե՝ ա. առկա է դատավարության բոլոր մասնակիցների միջև կնքված՝ գործը գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ գրավոր համաձայնություն, և հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետում դատավարության որևէ մասնակից չի առարկել գործը գրավոր ընթացակարգով քննելու դեմ կամ, բ. մինչև նախնական դատական նիստի ավարտը դատավարության որևէ մասնակից չի առարկել հայցի դեմ: Պարզ չէ, թե հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետում դատավարության որևէ մասնակցի՝ գրավոր ընթացակարգեր կիրառելու դեմ առարկելու պայմանը որ դեպքերում է կիրառելի և ինչ մեխանիզմով է ձեռք բերվելու նշված համաձայնությունը՝ հաշվի առնելով, որ պետք է առկա լինի դատավարության բոլոր մասնակիցների միջև կնքված՝ գործը գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ գրավոր համաձայնություն: Նույն նախագծով առաջարկվում է, որ գրավոր ընթացակարգով քննված և այդ կարգով կայացված դատական ակտերի վերանայման դեպքում Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության ցանկացած փուլում կարող է որոշում կայացել վերաքննիչ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու մասին: Կարծում ենք՝ Վերաքննիչ դատարանին նման լայն հայեցողությամբ օժտելը խնդրահարույց է: Առաջարկում ենք նախատեսել, որ օրինակ՝ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության ցանկացած փուլում կարող է որոշում կայացել վերաքննիչ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու մասին, սակայն Վերաքննիչ դատարանը չի կարող բողոքը քննել գրավոր ընթացակարգով, եթե առկա է կողմերից մեկի գրավոր միջնորդությունը՝ գործի բանավոր քննություն անցկացնելու վերաբերյալ: Կոնվենցիայի 13-րդ հոդվածը սահմանում է յուրաքանչյուրի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը: Անհրաժեշտ է հստակեցնել վերոնշյալ նորմը՝ Վերաքննիչ դատարանի բացարձակ հայեցողությունը սահմանափակելու և բողոք բերող անձանց՝ մրցակցային և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքն ապահովելու նպատակով: Ընդհանրապես՝ Օրենսդիրը պետք է վարույթը գրավոր ընթացակարգով անցկացնելու այնպիսի պայմաններ և

<sup>48</sup> Տե՛ս <https://www.e-draft.am/en/projects/2877>

չափանիշներ սահմանի, որոնք տեղիք չեն տա չարաշահումների: Նույնիսկ գրավոր ընթացակարգով քննվող գործի ընթացքում պետք է ապահովվի գործի քննության արդյունավետությունն ու հրապարակայնությունը: Նախագծերը դրվել են քննարկման Արդարադատության նախարարության կողմից:

▪ **«Պետական տուրքի մասին» օրենքը**

*Գործողությունը՝ 33 վարչական դատավարության օրենսգրքում «Պետական տուրքի մասին»*

*օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով հարկադիր*

*կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով, ինչպես նաև վարչական իրա վախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշմանդեմ բողոքներով պետական տուրք վճարելու պարտականություն:*

Դեռևս 30.06.2020 - 15.07.2020թթ էլեկտրոնային հարթակում հանրային քննարկման<sup>49</sup> էր դրվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով նախատեսվում էր բարձրացնել Դատարաններ մուտքագրվող դիմումների/ հայցադիմումների համար գանձվող պետական տուրքերի չափերը: Նախագիծը մեծ աղմուկ բարձրացրեց, ինչի արդյունքում այն չընդգրկվեց ԱԺ օրակարգ: Սակայն 04.12.2020թ. նախագիծը լրամշակվել և կրկին դրվել է հանրային քննարկման<sup>50</sup>: Հարկ է նշել, որ որոշ տեղերում պետական տուրքի չափերը նույնիսկ ավելի բարձր են, քան նախորդ նախագծում: Նախագծի հրապարակային քննարկման ժամկետը՝ 19.12.2020թ.: Ներկայումս Վարչական դատարան հայցադիմումներ ներկայացնելիս պետական տուրքը կազմում է բազային տուրքի քառապատիկի չափով գումար՝ 4.000 ՀՀ դրամ (դիմումներ ներկայացնելիս՝ 3.000 ՀՀ դրամ): Իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ լիազորված մարմինների կողմից կայացված վարչական ակտերը վիճարկելիս անձինք ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից: 04.12.2020թ. նոր շրջանառության մեջ դրված Նախագծով նախատեսվում է պետական տուրքի վճարման դրույքաչափը բարձրացնել հետևյալ կերպ՝ հայցադիմումների ներկայացման համար 10.000 ՀՀ դրամ՝ գործող 4.000 ՀՀ դրամի փոխարեն: Համապատասխանաբար 20.000 և 30.000 ՀՀ դրամ գումար վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար՝ գործող 10.000 և 20.000 ՀՀ դրամի փոխարեն: Դեռևս 2019թ. տարեվերջին «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարվեցին փոփոխություններ, որոնցով նախատեսվում է ճՈ ակտերի պարտադիր վերադատության կարգով բողոքարկման կարգ և պետական տուրք վճարելու պարտականություն: Հարկ է շեշտել, որ պետական տուրք վճարելու պարտականություն սահմանվել էր միայն ճանապարհային ոստիկանության կողմից կիրառվող վարչական պատասխանատվություն սահմանող վարչական ակտերի դատական բողոքարկման համար, ինչը Ազգային ժողովի պաշտոնական կայքում առկա տեղեկությունների համաձայն՝ արվել է դատարանների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով: 04.12.2020թ. նոր շրջանառության մեջ դրված Նախագծով նախատեսվում է պետական տուրք սահմանել բոլոր տեսակի վարչական պատասխանատվության վերաբերյալ ակտերը բողոքարկելու համար: Ընդ որում, վարչական պատասխանատվության վերաբերյալ ակտերը բողոքարկելու համար ֆիզիկական անձինք պետք է վճարեն բազային դրույքի 4-ապատիկի, իսկ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար համապատասխանաբար՝ 10-ապատիկի և 20-ապատիկի չափով գումար: Հաշվի առնելով վարչական գործերի առանձնահատկությունները՝ պետական տուրքերի դրույքաչափերի առավել քան երկու անգամ բարձրացումը արգելք է հանդիսանում

<sup>49</sup> Տե՛ս <https://www.e-draft.am/en/projects/2576/justification>

<sup>50</sup> Տե՛ս <https://www.e-draft.am/en/projects/2892/justification>

քաղաքացիների համար պետական մարմինների դեմ հայցադիմումներ ներկայացնելու համար և նրանց դեմ ակնհայտ անհավասար վիճակում, ինչը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով և ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության և սեփականության իրավունքներին: Ինչպես երևում է Նախագծի հիմնավորումներից, նմանատիպ փոփոխությունները կատարվում են դատարանների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով, սակայն անհրաժեշտ է նշել, որ դատարաններում վարչական մարմինների դեմ դատական գործերի քանակը սահմանափակելու առավել արդյունավետ միջոց է վերջինիս գործունեության, այդ թվում հիմնավորված որոշումներ կայացնելու ունակության բարելավումը, և ոչ քաղաքացիների՝ դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումը և հայցադիմում ներկայացնելու զսպումը: Այսինքն, տվյալ պարագայում ընդունվող կարգավորումն ու հետագա պրակտիկան պետք է բխեին անձի իրավունքների պաշտպանության և դատարանների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու անհրաժեշտության բալանսավորվման համատեքստում, այնպես, որ քաղաքացու իրավունքի պաշտպանությունը չստորադասվի: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն մեծապես կարևորելով վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության էական տարր, 2004 թվականի դեկտեմբերի 15-ին ընդունել է վարչական ակտերի դատական վերահսկողության 2000 20 հանձնարարականը<sup>51</sup>, որտեղ մասնավորապես նշված է, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի իրենց երկրի դատարանակազմությունը և դատական ընթացակարգերը համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին, որպեսզի երաշխավորվի վարչական ակտերի նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը: ՀՀ սահմանադրական դատարանը 26.05.2015թ. 1210 որոշմամբ քննության առարկա է դարձրել այն հարցը, թե արդյոք անձին տուգանքի տեսքով պատասխանատվության ենթարկելիս երաշխավորված են ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատական պաշտպանության արդյունավետ իրացման համար անհրաժեշտ և բավարար նախապայմաններ: Հիմնվելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ հիմնական եզրահանգումն այն է, որ օրենքով նախատեսված իրավաչափ պարտավորությունների կատարման համար վարչական միջոցների համաչափ գործադրումը չի կարող դիտվել որպես սեփականության իրավունքի ոտնահարում կամ սեփականությունից զրկում: Էականը՝ վարչական միջամտության դեմ դատական բողոք բերելու արդյունավետ միջոցի երաշխավորումն է: Այնինչ նախատեսվող կարգավորումները բացասաբար են անդրադառնում անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության և դատարանի հասանալիության ու մատչելիության իրավունքների վրա՝ սահմանելով անհամեմատ բարձր պետական տուրքի գումարներ՝ հատկապես վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար: Նախագծի հեղինակն Արդարադատության նախարարությունն է:

▪ **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում հատուկ վարույթների տեսակները**

*Գործողությունը՝ 33 վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ վերանայելով հատուկ վարույթների տեսակները:*

---

<sup>51</sup> Տե՛ս <https://vgmu.hse.ru/data/2010/12/31/1208184329/%D0%A0%D0%B5%D0%BA%D0%BE%D0%BC%D0%B5%D0%BD%D0%B4%D0%B0%D1%86%D0%B8%D0%B8%20114-132.pdf>

12.03.2020 - 27.03.2020թթ. հանրային քննարկման են դրվել<sup>52</sup> ««Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», ««Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնցով առաջարկվում է հարկային մարմնի կողմից բանկային և այլ ֆինանսական կազմակերպություններում օրենքով պահպանվող գաղտնի տեղեկության ստացումը հատուկ վարույթի շրջանակներում: Մասնավորապես՝ նախագծի ընդունումը նպատակ ունի իրավական հիմքեր ստեղծել Գլոբալ Ֆորումի անդամ երկրների միջև վավերացված միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների համաձայն հարցման հիման վրա հարկային նպատակներով տեղեկատվության փոխանակման համար և ապահովել Գլոբալ Ֆորումի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից հարկային հարցերում համապատասխանող երկրի կարգավիճակ և բավարար գնահատական ստանալը: Նախագծի՝ ԱԺ-ում քննարկման կամ ընդունման մասին որևէ տեղեկություն չկա: Ազգային ժողովը 19.04.2020թ. ստորագրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին նախագիծը<sup>53</sup>, որով նախատեսվեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրավիճակային հայտարարագիր ներկայացվելու որոշման իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը որպես հատուկ վարույթ: Այսպես՝ վարչական դատավարության օրենսգրքի 222.12-րդ հոդվածն այժմ նախատեսում է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրավիճակային հայտարարագիր ներկայացվելու վերաբերյալ որոշման իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարան կարող է դիմել այն անձը, որի վերաբերյալ կայացվել է իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու վերաբերյալ որոշում: Հայցը կարող է վարչական դատարան ներկայացվել Հանձնաժողովի կողմից իրավիճակային հայտարարագիր ներկայացվելու վերաբերյալ որոշումը ստանալու պահից հնգօրյա ժամկետում: Այն պետք է բովանդակի հիմնավորումներ առ այն, որ Հանձնաժողովի կողմից իրավիճակային հայտարարագիր ներկայացվելու վերաբերյալ որոշումն իրավաչափ չէ: ԱԺ նաև ընդունել և 09.09.2020թ. ստորագրել է<sup>54</sup> ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով նախատեսվում է Կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում ընդունված ակտերի իրավաչափության վիճարկման գործերի վարույթը, որպես հատուկ վարույթ: Նախագծի հեղինակը ՀՀ կառավարությունն է: Իրավունքների ու ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության տեսանկյունից խնդրահարույց են 09.09.2020թ. ստորագրված նախագծի հետևյալ կարգավորումները. Օրենսգրքի նոր լրացված «Գլուխ 31.5»-ը նախատեսում է «Կարանտին սահմանելու դեպքում կիրառվող միջոցների իրավաչափության վիճարկման գործերի վարույթը»: Նախատեսվում է, որ Կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում ընդունված ակտերի իրավաչափության վիճարկման վերաբերյալ դիմումը կարող է ներկայացվել կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում իրավասու մարմինների ընդունած վարչական ակտերի կամ գործողության (անգործության) վերաբերյալ օրենքով սահմանված կարգով իրագրվելու պահից մեկամսյա ժամկետում: Նույն գլխով նախատեսված գործերը քննվում են դիմումը վարույթ

<sup>52</sup> Տե՛ս <https://www.e-draft.am/projects/2345/digest>

<sup>53</sup> Տե՛ս [http://www.parliament.am/draft\\_history.php?id=11218&lang=arm](http://www.parliament.am/draft_history.php?id=11218&lang=arm)

<sup>54</sup> Տե՛ս [http://www.parliament.am/draft\\_history.php?id=11883](http://www.parliament.am/draft_history.php?id=11883)



ընդունելու պահից տասնօրյա ժամկետում: նախատեսված գործի քննության ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ ևս տասը օրով: Կարծում ենք, որ կարանտին սահմանելու դեպքում կիրառվող միջոցների իրավաչափության վիճարկման գործերի վարույթի նման սեղմ ժամկետներ նախատեսելը կարող է հանգեցնել անձի վարչական դատարան դիմելու, ինչպես նաև իր իրավունքների ու ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքների խախտման: Նախագծի ընդունման ընթացակարգային խախտումներ. Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են հանրային քննարկման, բացառությամբ միջազգային պայմանագրի վավերացման (դրան միանալու) մասին օրենքի նախագծի: Նույնաբովանդակ կարգավորումներ են նախատեսում նաև ՀՀ Կառավարության 2018թ.-ի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման հավելվածի 2-րդ և 9-րդ կետերը: Այսինքն՝ չի նախատեսվում առանց հանրային քննարկման անցկացման օրենսդրական ակտեր ընդունելու որևէ բացառություն՝ պայմանավորված ռազմական և արտակարգ դրությամբ, կարանտինի սահմանմամբ: Սակայն վերը նշված նախագիծը սահմանված կարգով չի դարձել հանրային քննարկման առարկա: Նախագծի հեղինակը ՀՀ կառավարությունն է:

▪ **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը**

Գործողությունը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով վարչական ակտերի պարտադիր բողոքարկման ընթացակարգեր:

Վերադասության կարգով բողոք ներկայացնելու պարտադիր կարգ այժմ գործում է միայն ճՈ կողմից կայացված ակտերի դեմ հայցադիմում ներկայացնելիս՝ որպես նախապայման, ընդ որում՝ նորմը սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով: Դրան հակառակ՝ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքով պարտադիր վերադասության կարգով բողոքարկման ընթացակարգ չի նախատեսվում: Այս մասով չկան նաև քննարկման դրված նախագծեր: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ ոչ բոլոր դեպքերում է վերադասության կարգով բողոքի ներկայացումն մեծապես անարդյունավետ է՝ հաշվի առնելով, որ շատ դեպքերում անհրաժեշտ է վերադաս բողոքը ներկայացնել հենց նույն մարմնին, որն իր հերթին ունի կոնկրետ որդեգրած քաղաքականություն և առաջնորդվում է դրանով: Կարծում ենք՝ վերը նշված գործողությամբ սահմանվող՝ պարտադիր բողոքարկման կարգ նախատեսող պայմանը սահմանափակում է արդար դատաքննության՝ դատարանի հասանելիության և մատչելիության իրավունքները: Մյուս կողմից՝ վերադասության կարգով բողոքի ներկայացումը շատ հաճախ կարող է միայն վնասել շահագրգիռ անձին՝ իր գործի՝ ողջամիտ ժամկետում քննության և լուծման տեսանկյունից: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք...»: Բացի դա, Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այնուամենայնիվ, ՄԻԵԴ-ը եզրահանգել է, որ դատական պաշտպանության

իրավունքը, որի մի մասն էլ կազմում են «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքները, բացարձակ չեն և կարող են ենթարկվել սահմանափակումների, սակայն կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորման ապահովմամբ: Ավելին, Գոլդբրն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ դատարանի մատչելիության իրավունքը սերում է միջազգային իրավունքի այն սկզբունքից, որն արգելում է արդարադատության մերժումը:

▪ **Վարչական իրավախախտումների նոր օրենսգրքի անհրաժեշտությունը**

Գործողությունը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ նախատեսելով վարչական ակտերի վերադասության կարգով բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունում:

Նոր օրենսգիրք չի ընդունվել, նաև առկա չէ նախագիծ: Այդուամենայնիվ, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում, 2020թ. ընթացքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ՝ սահմանելով նոր իրավախախտումներ կամ որոշ նորմեր լրամշակվել են: Օրինակ՝ ԱԺ- կողմից ամբողջությամբ ընդունված նախագծեր<sup>55</sup>: Կատարվել են լրացումներ Օրենսգրքի արտակարգ դրության ընթացքում սահմանված սահմանափակումների խախտմանը վերաբերող 182.3-րդ հոդվածում: Ստորագրվել է 24.03.2020թ.<sup>56</sup>: Օրենսգիրքը լրացվել է հետևյալ բովանդակությամբ հոդվածով՝ «206.17. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի վերաբերյալ տեղեկություններ հրապարակելը, կատարվել են այլ լրացումներ: Նախագիծը ստորագրվել է 19.04.2020թ.<sup>57</sup>: Օրենսգիրքը լրացվել է հետևյալ բովանդակությամբ հոդվածով՝ 169.18. Հիմնադրամների կողմից հաշվետվությունը չհրապարակելը կամ թերի հրապարակելը: Ստորագրվել է 08.04.2020թ.<sup>58</sup>: Օրենսգիրքը լրացվել է հետևյալ բովանդակությամբ հոդվածով՝ 47.27. Դեղային կերերին եւ կերային հավելումներին ներկայացվող պահանջները խախտելը: Նախագիծը ստորագրվել է 09.06.2020թ.<sup>59</sup>: Օրենսգիրքը լրացվել է հետևյալ բովանդակությամբ հոդվածով՝ 47.27. Ոչ հոժարական հասպիտալացման կարգը խախտելը: Նախագիծը ստորագրվել է 03.07.2020թ.<sup>60</sup>: Օրենսգիրքը լրացվել է հետևյալ հոդվածով՝ 182.4. Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող սահմանափակումների խախտումը: Նախագիծը ստորագրվել է 09.09.2020թ.<sup>61</sup> : Խմբագրվել են 137.1. Ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման հիմնական պահանջները չկատարելը և 137.7. Ավտոմոբիլային տրանսպորտով ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման հիմնական պահանջները չկատարելը հոդվածները: Նախագիծը ստորագրվել է 25.09.2020թ.<sup>62</sup>: Օրենսգիրքը լրացվում է հետևյալ հոդվածով՝ Դեղատնային գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ՀՀ դեղատնային գործունեության

<sup>55</sup> Տե՛ս [http://www.parliament.am/draft\\_history.php?id=11428](http://www.parliament.am/draft_history.php?id=11428)

<sup>56</sup> Տե՛ս [http://www.parliament.am/draft\\_history.php?id=11387](http://www.parliament.am/draft_history.php?id=11387)

<sup>57</sup> Տե՛ս [http://www.parliament.am/draft\\_history.php?id=11361](http://www.parliament.am/draft_history.php?id=11361)

<sup>58</sup> Տե՛ս [http://www.parliament.am/draft\\_history.php?id=11651](http://www.parliament.am/draft_history.php?id=11651)

<sup>59</sup> Տե՛ս [http://www.parliament.am/draft\\_history.php?id=11346](http://www.parliament.am/draft_history.php?id=11346)

<sup>60</sup> Տե՛ս [http://www.parliament.am/draft\\_history.php?id=11889](http://www.parliament.am/draft_history.php?id=11889)

<sup>61</sup> Տե՛ս [http://www.parliament.am/draft\\_history.php?id=11652](http://www.parliament.am/draft_history.php?id=11652)



իրականացման ընթացքում լիցենզավորման պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը /հոդ. 158.1 /:Նախագիծը ստորագրվել է 01.10.2020թ.<sup>63</sup>: Նախագծով սահմանվում է, թե որն է համարվում տնտեսական գործունեության կասեցում, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերն է քննում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, որպես իրավախախտում է սահմանվում Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում գործող կանոնները խախտելը և այլն: Ստորագրվել է 10.10.20թ:

## Ընտրական օրենսդրության բարեփոխումներ

### ▪ ՀՀ ընտրական օրենսգրքը

*Գործողությունը` ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների փաթեթի մշակում և ներկայացում ԱԺ:*

Համատեղ մշտադիտարկման թիմից ներկայացուցիչ կազմակերպությունը (ԻԲՄ ՀԿ) ներգրավված է ընտրական բարեփոխումների աշխատանքային խմբում, մասնավորապես` իրականացրել է Ընտրական օրենսգրքի 2-րդ (Ընտրացուցակներ) գլխի լրամշակումները, որոնք քննարկվել և ընդունվել են աշխատանքային խմբի կողմից: Այս պահին օրենսգրքի վերջնական տարբերակի` նախագծի աշխատանքները գտնվում են ավարտական փուլում: Ներառականության մասին` Աշխատանքային խումբն աշխատանքներն իրականացրել է բաց, մասնակցայնության ապահովմամբ, սոցիալական ցանցերում` (Facebook) ստեղծվել<sup>64</sup> է էջ` հանրության հետ փոխադարձ ավելի արդյունավետ կապի նպատակով: Ընտրական օրենսգրքի փոփոխությունների առաջարկություններն ըստ գլուխների և թեմաների դրվել է հանրային քննարկման օնլայն հարթակների միջոցով: Հանրային քննարկումների հայտարարություն<sup>65</sup> է տարածվել նաև Ազգային ժողովի կայքով: «Իրազեկ քաղաքացիների միավորման» կողմից կազմակերպվել է առանձին հանրային քննարկում ընտրական բարեփոխման կոմպոնենտներից մեկի<sup>66</sup> մասին: Ընտրական օրենսգրքի բարեփոխումը կարելի է համարել ներառական, քանի որ նախագծի վրա աշխատել են նաև մի շարք կոմպետենտ ՀԿ-ներ:

Սույն համատեղ մշտադիտարկման արդյունքում, քաղաքացիական հասարակությունը ՀՀ Արդարադատության նախարարությանը ներկայացրել են Ընտրական օրենսգրքում և հարակից իրավական ակտերում փոփոխություններ ու լրացումներ կատարելու հետևյալ առաջարկները (գործողությունները): Քաղաքացիական հասարակության կողմից մշակված առաջարկներ`

- *Կատարել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ հանձնարարականները պաշտոնի, ինչպես նաև վարչական ռեսուրսի չարաշահմամբ նախընտրական բարոզչության արգելման վերաբերյալ,*

<sup>62</sup> Տե՛ս [http://www.parliament.am/draft\\_history.php?id=11716](http://www.parliament.am/draft_history.php?id=11716)

<sup>63</sup> Տե՛ս [http://www.parliament.am/draft\\_history.php?id=12008](http://www.parliament.am/draft_history.php?id=12008)

<sup>64</sup> Տե՛ս <https://www.facebook.com/ElRefGroup>

<sup>65</sup> Տե՛ս [http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=13227&year=2020&month=08&day=06&lang=arm&fbclid=IwAR3nu2QsG6heum8U-4Bw-n7VGf6qSjs1wSjrhGcwXPoPTZBsLPdW0nGSWAA](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=13227&year=2020&month=08&day=06&lang=arm&fbclid=IwAR3nu2QsG6heum8U-4Bw-n7VGf6qSjs1wSjrhGcwXPoPTZBsLPdW0nGSWAA)

<sup>66</sup> Տե՛ս <https://www.facebook.com/events/1546668788864899/>

- Տեղամասային ընտրական հանձնաժողովների անկախությունը և անկողմնակալությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել ընտրական օրենսդրության փոփոխություն, ըստ որի՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումն իրականացնել նույն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների նշանակման սկզբունքով, այսինքն, Ազգային ժողովում խմբակցություն ունեցող յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) ընձեռնվի հավասար քանակով հանձնաժողովի նախագահ և քարտուղար նշանակելու հնարավորություն,
- Ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների կողմից նախընտրական քարոզչության իրականացման փուլում հնարավորությունների հավասարության ապահովման, ինչպես նաև նախընտրական քարոզչության թափանցիկության ապահովման նպատակով անհրաժեշտ է սահմանել նախընտրական քարոզչության իրականացման հետ կապված բոլոր ծախսերի կատարման պահանջ՝ միայն նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին: Բացի այդ, անհրաժեշտ է սահմանել նախընտրական հիմնադրամի միջոցների ընդհանուր առավելագույն չափ, ինչը կհանգեցնի նախընտրական քարոզչության իրականացման հետ կապված բոլոր ծախսերի համար առավելագույն չափի ամրագրմանը: Նույն հիմնավորումներով անհրաժեշտ է նախընտրական հիմնադրամից կատարվող բոլոր ծախսերը սահմանել որպես հայտարարագրման ենթակա ծախսեր,
- Անհրաժեշտ է սահմանել ընտրական հանձնաժողովների կողմից կայացվող՝ ընտրությունների արդյունքների ամփոփման, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում արձանագրված խախտումների վերաբերյալ և սեփական նախաձեռնությամբ խախտման փաստերը որպես հաղորդում քննելու մասին որոշումների հիմնավորված և պատճառաբանված լինելու պարտադիր պայման՝ հստակեցնելով, որ որոշումը կարող է համարվել հիմնավորված և պատճառաբանված, եթե նրանում մանրամասն անդրադարձ է կատարվել ընտրախախտումների ընդգրկման ծավալին, խախտումներ կատարելու միջոցներին ու ձևերին, հաշվի է առնվել խախտումների լրջությունն ու ծանրությունը և յուրաքանչյուր դեպքում՝ կոնկրետ փաստական հանգամանքները: Միևնույն ժամանակ ՀՀ ընտրական օրենսգրքով անհրաժեշտ է առավել մանրամասն և հստակեցված կարգավորումներ և մեխանիզմներ նախատեսել՝ ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցություն ունեցող խախտումները բնորոշելու և ընտրությունների արդյունքների վրա դրանց հնարավոր ազդեցությունը գնահատելու համար:
- ՀՀ ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածի (ԿԸՀ կազմավորելու կարգը) 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերը, ինչպես նաև Օրենսգրքի 43-րդ հոդվածի (ՏԸՀ կազմավորելու կարգը) 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերը անհրաժեշտ է ճանաչել ուժը կորցրած: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նաև Ընտրական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի «վերջին 5 տարում առնվազն 2 տարվա մասնագիտական ստաժ» դրույթը փոխարինել «վերջին 5 տարում առնվազն 1 տարվա մասնագիտական ստաժ» դրույթով: Այս փոփոխության անհրաժեշտությունը մեծապես պայմանավորված է Օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի ուժը կորցնելու արդյունքում հանձնաժողովների համալրման խնդրից հնարավորինս խուսափելու հանգամանքով: Բացի այդ, 1 տարվա մասնագիտական ստաժը իրավաբանական բարձրագույն կրթություն ունենալու պահանջի հետ համադրությամբ լիովին բավարար են Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամի գործառույթները լիարժեք իրականացնելու համար:

- ՀՀ ընտրական օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վերահսկողություն է իրականացնում իր կողմից սպասարկվող տարածքում սույն օրենսգրքի պահանջների կատարման նկատմամբ, այդ թվում՝ իրականացնում է զանգվածային լրատվամիջոցներում հրապարակվող տեղեկատվության մշտադիտարկում՝ իր կողմից սպասարկվող տարածքում սույն օրենսգրքի պահանջների խախտումները հայտնաբերելու նպատակով: Համապետական ընտրությունների դեպքում իր կողմից հայտնաբերված խախտումների կապակցությամբ, օրենսդրությամբ սահմանված միջոցների ձեռնարկումից բացի, կազմում է հաղորդումներ և ներկայացնում դրանք կենտրոնական ընտրական հանձնաժողով:»,
- Ընտրական հանձնաժողովների հետ արդյունավետ գործակցության շրջանակներում ուստիկանության պարտականությունների հստակեցման, ինչպես նաև տեղամասային կենտրոններում և դրանց հարող տարածքներում, քվեարկության սենյակներում՝ առանց հանձնաժողովի նախագահի ցուցումին սպասելու ընտրախախտումների առավել օպերատիվ կանխարգելման կամ վերացման հնարավորություն ստեղծելու անհրաժեշտությունից ելնելով՝ անհրաժեշտ է ընդլայնել ուստիկանության ծառայողների լիազորությունները,
- Անհրաժեշտ է ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ «Արգելվում են քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, անձանց (անգամ մեկ անձի) շարունակական ներկայությունը, այդ թվում՝ մեքենայով: Արգելվում է տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը»: Այս դրույթը նոր խմբագրմամբ շարադրելը, հատկապես՝ մեկ անձի շարունակական ներկայությունը տեղամասային կենտրոնի հարակից տարածքում արգելող դրույթով լրացնելու անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ որևէ գործնական տարբերություն կարող է չլինել անձանց խմբերով հավաքվելու և ընդամենը մեկ անձի շարունակական ներկայության միջև, եթե այդ անձի/անձանց ներկայությունը պայմանավորված է քվեարկողներին ուղղորդելու նպատակով, կաշառք բաժանելու կամ կատարված քվեարկության արդյունքները ճշտելու նպատակով:
- Անհրաժեշտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով հստակեցնել «իրավասու ընտրական հանձնաժողով» եզրույթը՝ սահմանելով ընտրության ոլորտին առնչվող յուրաքանչյուր վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման համար պատասխանատու հանձնաժողովին:
- Անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ ձեռնարկել հանձնաժողովների անկախության և անկողմնակալության աստիճանը, ինչպես նաև վերջիններիս նկատմամբ հանրային վստահության մակարդակը բարձրացնելու նպատակով, այդ թվում՝ ընդլայնելով այն անձանց շրջանակը, որոնք չեն կարող որպես անդամ ընդգրկվել ընտրական հանձնաժողովների կազմում: Այս շրջանակում պետք է ընդգրկվեն ոչ միայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների, ինչպես նաև դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարման համար դատվածություն ունեցող անձինք, այլև ցանկացած այլ

հանցագործության համար նախկինում դատապարտված անձինք՝ անկախ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից հետո անցած ժամանակահատվածից:

- *Դիտորդական կազմակերպության անկողմնակալությունը և չեզոքությունը երաշխավորելու մեխանիզմներ սահմանել Ընտրական օրենսգրքում: Նման մեխանիզմների բացակայության պայմաններում ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված՝ դիտորդի անկողմնակալության և չեզոքության վերաբերյալ դրույթն ըստ Էության վերածվում է հոշակագրային նորմի:*
- *Անհրաժեշտ է ՀՀ ընտրական օրենսգրքում կատարել լրացում՝ ճանաչելով դիտորդական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը դիտորդի կարգավիճակից բխող իրավունքների խախտման վերաբերյալ գործերով, ինչպես նաև սահմանել դիտորդի և դիտորդական կազմակերպությունների կողմից օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավունքը: Քննարկել նաև քվեարկության/ընտրությունների արդյունքները անմիջականորեն ընտրողների, դիտորդների և դիտորդական կազմակերպությունների կողմից վիճարկելու իրավունքի սահմանումը Ընտրական օրենսգրքով:*
- *Անհրաժեշտ է վերանայել ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված բողոքարկման և ընտրական հանձնաժողովների կողմից որոշումների կայացման ժամկետներին վերաբերող իրավակարգավորումները, որոնց ուժով փաստացի բացառվում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների դեմ ներկայացված դիմում-բողոքների քննությունը:*
- *«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում նախատեսել պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն՝ Վարչական դատավարության և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքերում 07.09.2018թ. կատարված փոփոխություններով դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին վերապահված՝ առանձին ընտրախախտումներով վարչական պատասխանատվության ենթարկելու հայց ներկայացնելու իրավունքի իրականացման համար:*

Նկատի ունենալով ընտրական օրենսդրությանն առնչվող բնագավառում քաղաքացիական հասարակության կողմից արձանագրված խնդիրները, ՀՀ Արդարադատության նախարարությանը առաջարկվել է քննարկել թափանցիկ և արդար ընտրությունների իրականացման համար իրավական հիմքեր և մեխանիզմներ սահմանելու ուղղությամբ Հիմնադրամի կողմից մշակված առաջարկները: ՀՀ Արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարը տեղեկացրել է, որ քաղաքացիական հասարակության կողմից ներկայացված Ընտրական օրենսգրք սահմանադրական օրենքում փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունները կքննարկվեն Արդարադատության նախարարության կողմից հնարավոր օրենսդրական փոփոխությունների համատեքստում: Նշվածի հետ մեկտեղ համատեղ մշտադիտարկման թիմի ներկայացուցիչը սույն թվականի հունիսից ներգրավված է եղել ՀՀ Ազգային ժողովի Ընտրական բարեփոխումների աշխատանքային խմբում, որն իրականացնում է ՀՀ ընտրական օրենսգրքի բարեփոխմանն ուղղված աշխատանքներ /մի շարք քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համատեղ/, և մասնակցել ա.թ. օգոստոսին առցանց եղանակով կազմակերպված Ընտրական օրենսգրքի փոփոխությունների մի մասի հանրային քննարկումներին:

## Կոռուպցիայի դեմ պայքար

Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում կարևոր գործառնությունն ուղղություն է կանխարգելումը: Այն իրականացնելու նպատակով ՀՀ ԱԺ կողմից ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ ԱԺ կողմից ընտրվել են կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 5 անդամները, որոնք իրենց կազմից ընտրել են հանձնաժողովի նախագահ: Այսուհետև հանձնաժողովի անդամներից մեկը ներկայացրել է հրաժարականի դիմում: Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում հանձնաժողովի աշխատանքները գնահատելու առումով հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 10.09.2020թ. որոշմամբ սահմանվել է հանձնաժողովի համար 40 անձից բաղկացած աշխատակազմի հնարավորություն՝ 6 մասնագիտացված վարչությունների աշխատակիցների, հանձնաժողովի նախագահի և անդամների օգնականների և այլ հաստիքներով: 2020թ. սակայն, հանձնաժողովի աշխատակազմը չի ձևավորվել, ու թեև գործառնությունների արդյունավետ իրականացմանը, որպես խոչընդոտ, հանձնաժողովի կողմից մատնանշվում է վերոնշյալ փաստի գոյություն, հարկ է նշել, որ հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հանձնաժողովի իրավանախորդ՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակազմից 12 աշխատակից: Հանձնաժողովին գործառնությունների իրականացման աշխատանքներում 2020թ. օժանդակություն է ցուցաբերել միջազգային դոնորների աջակցությամբ ներգրավված 21 փորձագետներ:

2020թ.՝ պայմանավորված պանդեմիայի և պատերազմական գործողությունների հանգամանքով որոշակի խափանումներ են արձանագրվել եկամուտների, գույքի, շահերի հայտարարագրման էլեկտրոնային համակարգում: Հանձնաժողովը հաստատել է հայտարարագրերի լրացման կարգը: Ձևավորված չեն բարեվարքության կանոնների համակարգը, վարքագծի տիպային կանոնները և մշակման ուղեցույցները բացակայում են: Ապահովված է հայտարարատու սուբյեկտների պատշաճ իրազեկվածության աստիճանը հայտարարագրերի լրացման օրենսդրական կարգավորումների առումով: Հանձնաժողովի կայքը ինֆորմատիվության առումով սահմանափակ է, մասնավորապես՝ բարեվարքության վերաբերյալ վարույթների վիճակագրություն չի վարվում:

2020թ. ընթացքում հանձնաժողովը հարուցել է 57 վարույթ՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ, որից 55-ը հայտարարագրեր չներկայացնելու համար, 2-ը հայտարարագրում ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու համար: Հանձնաժողովը հարուցել է նաև 4 վարույթ՝ Երևանի քաղաքապետ Հ. Մարությանի (անհամատեղելիության պահանջի խախտում), ՀՀ ԱԺ պատգամավոր Գ. Ծառուկյանի (անհամատեղելիության պահանջի խախտում), ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կ. Կարապետյանի (վարքագծի պահանջի խախտում) և ՀՀ առողջապահության նախարար Ա. Թորոսյանի (իրավիճակային շահերի բախում) վարքագծի վերաբերյալ: Վերոնշյալ խախտումները արդյունքում հանգեցնում են շահերի բախման և վարքագծի կանոնների խախտման իրավիճակների: Վերոնշյալ վարույթների ուսումնասիրությունը, մասնավորապես՝ Հ. Մարությանի և Գ. Ծառուկյանի վերաբերյալ, թույլ են տալիս եզրահանգել, որ միևնույն փաստացի ելակետային իրավիճակներում հանձնաժողովը դրսևորել է տարբերակված մոտեցում, ինչը հետագայում կարող է հանդիսանալ բացասական նախադեպի ձևավորման պրակտիկա: Մասնավորապես, անհամատեղելիության պահանջ հանդիսացող՝ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու կամ առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ընդգրկված լինելու վերաբերյալ իրավադրոյթը երկու համանման փաստական դեպքերում մեկնաբանվել է տարբեր կերպ:

- **Հակակոռուպցիոն քաղաքականություն**

*Գործողությունը՝ 2020թ. առաջին եռամսյակում ստեղծել փաստահավաք հանձնաժողով:*

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությամբ նախատեսված էր 2020թ. առաջին եռամսյակում ստեղծել փաստահավաք հանձնաժողով: Սակայն փաստահավաք հանձնաժողովի մասին օրենսդրական ակտի նախագիծը ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ դրվեց 2020թ. մայիսին՝ առաջարկներ ներկայացնելու համար: Մինչ օրս նախագիծը ԱԺ քննարկմանը չի ներկայացվել: Այսօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասով օրենքը հարակից օրենքների հետ ընդունվել է, ՀՀ դատախազության համակարգում ձևավորվել է կառույց՝ գործընթացն իրացնելու նպատակով: Ուսումնասիրությունների համաձայն՝ առաջիկա վարույթները հակակոռուպցիոն դատարան կարող են հասնել նվազագույնը մեկ տարի անց: Հակակոռուպցիոն կոմիտեի մասին օրենքի նախագիծը ՀՀ կառավարության դրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ ԱԺ, որը դեռևս ընդգրկված չէ օրակարգում: Դեռևս նախագծի հրապարակման փուլում ներկայացված առաջարկների ընդունման գործընթացը գտնվում է դիտարկման փուլում:

▪ **Կոռուպցիոն հանցագործությունների քննությունը**

*Գործողությունը՝ 2021-2022թթ. ընթացքում ձևավորել կոռուպցիոն հանցագործությունների քննության միասնական նախաքննական մարմին:*

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրով նախատեսված է 2021-2022թթ. ընթացքում ձևավորել կոռուպցիոն հանցագործությունների քննության միասնական նախաքննական մարմին՝ հակակոռուպցիոն կոմիտե (այսուհետ՝ կոմիտե): Այս ուղղությամբ ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2020թ. մշակվել և շրջանառության մեջ է դրվել կոմիտեի մասին ՀՀ օրենքի նախագիծը, որն արժանացել է ՀՀ կառավարության դրական եզրակացությանը և ներկայումս գտնվում է ՀՀ ԱԺ-ում: Գնահատելով կոմիտեի ձևավորումը՝ որպես կոռուպցիոն հանցագործություններ քննող միասնական մարմին, անկախության և գործառնության արդյունավետության տեսանկյունից, կարող ենք փաստել, որ անկախության և հաշվետվողականության լիարժեք և արդյունավետ մեխանիզմներ ներդրված չեն: Մասնավորապես՝ կոմիտեի նախագահի հաշվետվողականությունը երկրի բարձրագույն ներկայացուցչական մարմնի առջև կրում է ձևական բնույթ՝ դրսևորվելով գործունեության վերաբերյալ ձևական հաղորդումներ ԱԺ ներկայացնելու իրավակարգավորմամբ: Բացի այդ, կոմիտեի նախագահը նշանակվում է վարչապետի կողմից: Միաժամանակ կարող ենք արձանագրել, որ կոմիտեի նախագահի թեկնածուի ընտրության հարցում նախագծում ամրագրված իրավակարգավորումները պարունակում են առաջատար նորմեր՝ կապված մրցույթային գործընթացի վերահսկման թափանցիկ մեխանիզմների սահմանման հետ: Մասնավորապես, նախատեսվում է մրցույթային հանձնաժողովում ներգրավել նաև ՀԿ ներկայացուցիչներ: Սակայն, կոմիտեի նախագահի նշանակումը վարչապետին վերապահելով և նախագահի հաշվետվողականության վերաբերյալ վերոնշյալ ոչ արդյունավետ և ձևական իրավակարգավորումներով կոմիտեի անկախության երաշխիքների վերաբերյալ ընդհանուր գնահատականը բացասական է: Հանրային քննարկումների փուլում ՀԿ ներկայացուցիչների կողմից առաջարկվել է կոմիտեի նախագահի և ղեկավար կազմի հաշվետվողականությունը դարձնել խորհրդարանական արդյունավետ գործիքակազմի վերահսկողության առարկա: Առաջարկները չեն ընդունվել նախագծի հեղինակի կողմից: Կոմիտեի կազմավորման և գործունեության առումով դրական պետք է գնահատել վերջինիս կառուցվածքում նաև օպերատիվ-հետախուզական ծառայությունների ներգրավման իրավակարգավորումները: Մասնավորապես, նախագծի համաձայն՝ կոմիտեն նախաքննության աջակցության շրջանակներում ձևավորելու է օպերատիվ-



հետախուզական իր ստորաբաժանումները՝ տեխնիկական հագեցվածության անհրաժեշտ մակարդակով, իսկ քննիչները ունենալու են հնարավորություն անմիջականորեն ներգրավելու նաև այդ գործողությունների իրականացմանը: Նման իրավակարգավորումները հնարավորություն կտան կոմիտեին գործել արդյունավետ հանցագործությունների քննության և բացահայտման առումով, քանի որ մեկ մարմնում կմիատեղվեն հանցագործությունների բացահայտման համար երկու օղակ՝ հետախուզական և դրա արդյունքում ձեռք բերված տվյալների վերլուծության արդյունքում քննչական և դատավարական գործողությունների պլանավորման և իրականացման: Որոշակի խնդիրներ են կանխատեսվում կոմիտեի օպերատիվ ստորաբաժանումների ձևավորման հարցում: Մասնավորապես՝ կոմիտեի ծառայողների ընտրության համար նախագծի 19-րդ հոդվածով առաջարկվում է կոմիտեի նախագահի կողմից ձևավորել հանձնաժողով 7 անդամով՝ 3 իրավաբան գիտնական, 3 պետական ծառայող, 1-ը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ: Հարկ է նշել, որ նախագծում առկա չեն առանձնահատուկ իրավակարգավորումներ օպերատիվ ծառայության աշխատակիցների թեկնածուների ընտրության համար, քանի որ նախագծով առաջարկվող վերոնշյալ հանձնաժողովի կազմով գաղտնի ծառայությունների աշխատակիցների ձևավորումն անհնարին է: Բացի այդ, քննչական ծառայության համար առաջարկվող հանձնաժողովի կազմը ևս հստակ չէ: Օրինակ 3 պետական ծառայող՝ հստակեցված չէ նրանց ներկայացվող պահանջները, կամ մեկը քաղաքացիական հասարակությունից՝ կարգավորված չէ ներկայացվող չափանիշները: Այս առումով հարկ է նշել, որ կոմիտեի օպերատիվ գաղտնի ծառայությունների աշխատակիցների ընտրությունը անհրաժեշտ է կատարել բացառապես ներքին կանոնակարգերի և իրավակարգավորումների շրջանակում ձևավորված ընթացակարգերով՝ առանց արտաքին միջամտության:

▪ **Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանները**

*Գործողությունը՝ ձևավորել հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ինստիտուտը*

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությամբ դատական համակարգի գերծանրաբեռնվածությունը թեթևացնելու և կոռուպցիոն հանցագործությունների քննության ոլորտում մասնագիտական ուղղվածությունն ապահովելու նպատակով նախատեսված է ձևավորել հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ինստիտուտը: Այդ նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2020թ. հուլիսին շրջանառության մեջ է դրվել «Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագիծն արժանացել է ՀՀ կառավարության դրական եզրակացությանը և գտնվում է ՀՀ ԱԺ-ում: Ներկայացված նախագծով նախատեսվում է իրավակարգավորումներ, որոնք կարող են դրականորեն ազդել կոռուպցիոն գործեր քննող դատավորների անկախության աստիճանը բարձրացնելու վրա: Մասնավորապես՝ հակակոռուպցիոն դատարանների դատավորների ընտրության գործընթացում ներգրավվելու հնարավորություն են ստանում նաև փորձագետներ, այդ թվում՝ միջազգային: Հակակոռուպցիոն դատարանի ենթակայության գործերի բողոքարկման նպատակով ձևավորվում է նաև վերաքննության աստիճանի դատարան: Նշված միջոցառումները, բացի գործերի քննության մասնագիտացման աստիճանի բարձրացումից, կնպաստեն նաև դատական համակարգի ծանրաբեռնվածության թուլացմանը:

▪ **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը**

Գործողությունը` Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում:

ԿԿՀ գործառույթների իրականացման դիտարկումը ներառում է բարեվարքության մեթոդաբանության, անհամատեղելիության պահանջների գնահատման մեթոդաբանության և հանրային ծառայողների գնահատման վերաբերյալ այլ իրավակարգավորումների գնահատումը: Այդ նպատակով ԿԿՀ ուղարկված հարցմանը դեռևս պատասխան չի տրվել: Այնուամենայնիվ առկա դիտարկման համաձայն` ԿԿՀ աշխատակազմը ձևավորման առումով խիստ թերանում է, մեթոդաբանության մշակման վերաբերյալ տվյալները կպարզվեն հարցման արդյունքով:

▪ **Հակակոռուպցիոն կոմիտեի մասին օրենքը**

Գործողությունը` Հակակոռուպցիոն կոմիտեի մասին օրենքի ընդունում և դրանում անկախության Էական երաշխիքների ամրագրում: Պաշտոնատար անձանց հայտարարագրերի մեխանիզմի արդիականացում` փաստացի օգտագործվող գույքի ներառման միջոցով:

ՀՀ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի (այսուհետ` Օրենքի) նախագիծը գտնվում է e-draft էլեկտրոնային համակարգում: Օրենքում առկա են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ` Կոմիտե) անկախության օրենսդրական երաշխիքներ, որոնք կարելի է դասակարգել որպես արտաքին և ներքին անկախության երաշխիքներ. ա. Արտաքին անկախության երաշխիքն է Կոմիտեի նախագահի և ծառայողների նշանակման կարգը, որը իրականացվում է երկու անկախ մարմինների, համապատասխանաբար` Խորհրդի և Հանձնաժողովի կողմից, որոնց կազմում մտնում են ինչպես օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ներկայացուցիչներ, այնպես էլ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Բ. Ներքին անկախության երաշխիքներ են ֆինանսական անկախությունը, սոցիալական երաշխիքները, ինստիտուցիոնալ անկախությունը, կուռ և հստակ համակարգն ու կառուցվածքը: Ֆինանսական անկախության մասով հարկ է ընդգծել, որ Կոմիտեի ֆինանսավորումը իրականացվում է պետական բյուջեի միջոցով` համապատասխան հայտ ներկայացնելու եղանակով, որը կարող է ուղարկվել ինչպես ՀՀ կառավարություն, ինչպես նաև բյուջեի մասին օրենքի քննարկման ընթացքում` ՀՀ Ազգային ժողով:

Սոցիալական երաշխիքներ են Կոմիտեի ծառայողների բարձր աշխատավարձը, ինչպես նաև պետական ծառայության այլ սոցիալական երաշխիքները: Ֆինանսական անկախության մասով թեկուզ առկա է Կոմիտեի ծառայողների աշխատավարձերի տրամադրման օրենսդրական երաշխիք, սակայն բացակայում են նյութատեխնիկական բազայի (շինություն, կահույք, տեխնիկա և այլն) ապահովման օրենսդրական երաշխիքները: Ինստիտուցիոնալ անկախությունն ապահովվում է նրանով, որ Կոմիտեի կազմում կան ինչպես քննչական, այնպես էլ օպերատիվ-հետախուզական մարմիններ` օպերատիվ հետախուզական իրավական և նախատեսված տեխնիկական անհրաժեշտ գործիքակազմով: Կոմիտեի համակարգն ու կառուցվածքը բնորոշ են իրավապահ համակարգի միասնական և հստակ հիերարխիային:Որպես խորհրդի գործունեության թափանցիկության երաշխիք, կարծում ենք` Օրենքում կարող է ամրագրվել նաև Խորհրդի նիստերի դոնբացությունը, ինչպես նաև տեսաձայնագրումը: Վերջինս, սակայն, կարող է կարգավորվել նաև ենթաօրենսդրական ակտերով: Ընդհանուր առմամբ` Օրենքում առկա են անհրաժեշտ և բավարար երաշխիքներ Կոմիտեի անկախության, պատշաճ մասնագիտական և բարոյական հատկանիշներով օժտված ծառայողների նշանակման, ինչպես նաև այդ գործընթացի թափանցիկության համար: «Հանրային ծառայության մասին» օրենքի և հարակից օրենքների փաթեթով ամբողջությամբ նախատեսված է փաստացի օգտագործվող գույքի և ծախսերի հայտարարագրման մեխանիզմը:

Ապահովված է իրավակարգավորման ամբողջականությունը: Ներառականության մասին՝ ՀՀ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի<sup>67</sup> նախագիծը գտնվում է e-draft էլեկտրոնային համակարգում: Նախագծի՝ մեզ հայտնի միակ հանրային քննարկումը<sup>68</sup> կազմակերպվել է 2020 թվականի փետրվարին՝ «Իրազեկ քաղաքացիների միավորման» կողմից: Այն չի քննարկվել Վարչապետին կից հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում: 2019թ. հուլիսին հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի<sup>69</sup> նիստին կազմակերպության ներկայացուցիչ Դանիել Իոաննիսյանը հանդես է եկել փաստացի օգտագործվող գույքի ներառման միջոցով պաշտոնատար անձանց հայտարարագրերի մեխանիզմի արդիականացում առաջարկով, որի վերաբերյալ 2020 թվականին Արդարադատության նախարարությունը պատրաստել է օրենսդրական փաթեթ: 2020 թվականի հուլիսին նախագիծը քննարկվել է հակակոռուպցիան քաղաքականության խորհրդում, ինչպես նաև հրապարակված է եղել e-draft հարթակում:

- **Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը**

*Գործողությունը՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի ընդունում*

16.04.2020թ. ԱԺ կողմից ընդունվել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը: Դեռևս հանրային քննարկումների փուլում ներկայացվել են առաջարկներ օրենքի նախագիծը կատարելագործելու, նրանում առկա իրավական հակասությունները շտկելու վերաբերյալ: Օրենքի դրույթների իրացման նպատակով 03.09.2020թ. ՀՀ գլխավոր դատախազության կազմում առանձնացվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով առանձին վարչություն: Վարչության դատախազների ընտրությունը կազմակերպվել է մրցույթային հիմունքներով, որոնց մասնակցության հնարավորություն է ընձեռվել նաև ՀԿ ներկայացուցիչներին՝ առանց հարցադրումներ կատարելու հնարավորության: Մրցույթային հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրառելու հնարավորությունը ևս բացակայել է: Դրական եզրակացություն ստացած 7 թեկնածուներից ՀՀ գլխավոր դատախազի հրամանով նշանակվել է 5 դատախազ և գլխավոր դատախազի՝ հակակոռուպցիոն ոլորտը համակարգող տեղակալ: 2020թ. սեպտեմբերի 3-ից՝ վարչության կազմավորումից սկսած քրեական գործերով հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ սկսվել է 206 անձի վերաբերյալ վարույթային ուսումնասիրություն: Ընթացքի վերաբերյալ կիրականացվեն տեղեկատվության հարցումներ և ՁԼՄ մոնիտորինգ:

- **Գնումների բողոքարկման համակարգը, էլեկտրոնային գնումների համակարգը**

*Գործողությունները՝ Գնումների բողոքարկման համակարգի կատարելագործում: Գնումների մասին ՀՀ օրենքում փոփոխությունների կատարում: Էլեկտրոնային գնումների համակարգի արդիականացում: Էլեկտրոնային գնումների համակարգի նոր ծրագրային ապահովման մշակում և ներդրում:*

2020թ. ընթացքում «գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ չեն իրականացվել: Ըստ այդմ, օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումները՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերաբերյալ գործում են և բողոքարկման գործընթացում որպես որոշում կայացնող սուբյեկտ հանդես են գալիս մասնավոր ֆիզիկական անձիք: Նման իրավակարգավորումը

<sup>67</sup> <https://www.e-draft.am/projects/2256>

<sup>68</sup> <https://www.facebook.com/events/747066252726007/>

<sup>69</sup> <https://www.gov.am/am/anticorruption-council-members/>

չի բխում պետական մարմնի որոշումը բողոքարկելու կառավարչական սկզբունքից: Գնումների գործընթացի նկատմամբ արդյունավետ հսկողական և վերահսկողական գործառնությունների իրականացման տեսանկյունից անհրաժեշտ էր և պլանավորվում էր նախատեսել դատական բողոքարկման հնարավորություն: Օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ վերջնական որոշում դեռևս առկա չէ: Էլեկտրոնային գնումների համակարգի արդիականացման հետ կապված միջոցառումներ 2020թ. չեն իրականացվել: Ավելին, դեռևս անհայտ պատճառներով Էլեկտրոնային գնումների Armeps համակարգը չի գործում: Համակարգի գործունեության դադարեցման պատճառների վերաբերյալ որևէ պաշտոնական մեկնաբանություն առկա չէ: Սակայն ոչ պաշտոնական մակարդակում առկա է հակասական տեղեկատվություն կամ համակարգի խափանման կամ ռազմական դրությամբ պայմանավորված արգելափակման հետ: Գնումների գործընթացի վերահսկելիության տեսանկյունից բացասական պետք է գնահատել մեկ անձից գնումների տոկոսային աճը: Այսպես 2018թ. 1-ին կիսամյակում մեկ անձից գնումները կազմել են 55%, 2020թ. նույն ժամանակահատվածում՝ 70%: Հիմնականում դա պաշտոնական մակարդակում պայմանավորում են համավարակի ժամանակաշրջանով, սակայն գործընթացի թափանցիկությունը կասկածելի է:

- **Թափանցիկ և հաշվետու կառավարումը**

*Գործողությունը՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով հանրային կառավարման հաշվետվողականության երաշխիքների ավելացում, տեղեկությունների՝ անհիմն կերպով պետական, ծառայողական, առևտրային և անձնական տվյալների գաղտնիքին դասելու հնարավորությունների սահմանափակում: Հանրային ծառայողների ստացած բյուջետային եկամուտների թափանցիկության կանոնակարգում: Վարչական դատավարության օրենսգրքով տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության հատուկ ընթացակարգերի ներդրում:*

Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցության ապահովման արդյունավետության բարձրացման առումով 2020 թվականին առաջընթաց չի գրանցվել: Մասնավորապես, մինչև իրավական ակտերի նախագծերի պատրաստումը հասարակության կողմից դրանց պահանջարկի կամ անհրաժեշտության ձևավորման, կարգավորման առարկայի առանձնահատկության վերաբերյալ նախաձեռնության իրավունք ունեցող սուբյեկտների կողմից ուսումնասիրություններ և վերլուծություններ հասարակության շրջանում չեն կատարվում: E-draft համակարգը հանրության հասանելիության տեսանկյունից հետընթաց է ապրել, քանի որ ակտերի նախագծերը բաժանորդների Էլեկտրոնային հասցեներին չեն ուղարկվում:

## Հավաքների ազատություն, Լրատվամիջոցների, տեղեկատվության և կարծիքի արտահայտման ազատություն

---

- **«Հավաքների ազատության մասին» օրենքը**

Գործողությունները՝ Փոփոխություններ կատարել «Հավաքների ազատության մասին» օրենքում՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Օրենսդրորեն սահմանել հավաքների հետ կապված ՀՀ ոստիկանության գործողությունների կարգը և պայմանները՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքում միջազգային չափանիշներին համապատասխան փոփոխություններ կատարելու, ինչպես նաև հավաքների հետ կապված ՀՀ ոստիկանության գործողությունների կարգը և պայմանները սահմանելու կապակցությամբ ձեռնարկված/ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից տեղեկացվել է, որ հաշվի առնելով, որ «Հավաքների ազատության մասին» օրենքում միջազգային չափորոշիչներին համապատասխան փոփոխություններ կատարելուն և հավաքների հետ կապված ՀՀ ոստիկանության գործողությունների կարգը և պայմանները՝ միջազգային չափանիշներին համապատասխան օրենսդրորեն սահմանելուն առնչվող կետերի համար վերջնաժամկետ են սահմանված համապատասխանաբար 2021թ. առաջին կիսամյակը և 2022թ. առաջին կիսամյակը, դրանցով նախատեսված իրավական ակտերի նախագծերի մշակման ուղղությամբ դեռևս իրականացվում են ուսումնասիրություններ:

▪ **«Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» ԵԽ կոնվենցիան**

Գործողությունը՝ Ստորագրել «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» ԵԽ կոնվենցիան:

Քաղաքացիական հասարակության թիմի հարցմանն ի պատասխան տեղեկացվել է, որ ս.թ. հունիսի 24-ին ՀՀ ստորագրել է «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան և ղեկավարվելով «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով այն կներկայացվի ՀՀ Ազգային ժողովի վավերացմանը: Նկատի ունենալով «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացման դեպքում տեղեկատվության մատչելիության միջազգային կառուցակարգերի սահմանման անհրաժեշտությունը ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով քաղաքացիական հասարակության կողմից ոլորտում իրականացված ուսումնասիրությունը, բացահայտված խնդիրները, առկա միջազգային չափանիշներն ու լավագույն միջազգային փորձը, առաջարկվել է վերոնշյալ ոլորտում իրականացնել հետևյալ օրենսդրական բարեփոխումները՝

ա. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ և ընդլայնել տեղեկատվություն տնօրինողների ցանկը, վերանայել/նվազեցնել հարցմանն առաջադրվող ձևական պահանջները, նախատեսել տեղեկատվության ազատության սահմանափակման դեպքում հանրային շահի թեստ, սահմանել պարտականություն հայցված տեղեկատվությունը հաշմանդամություն ունեցող անձանց՝ նրանց հասանելի ձևաչափով տրամադրելու նպատակով,

բ. կատարել անհրաժեշտ փոփոխություններ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում և այլ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում՝ տեղեկատվության տրամադրման վճարովիությունը բացառելու նպատակով (բացառությամբ ծավալով, ավելի հստակ՝ էջաքանակով կամ հատուկ ծառայությունների մատուցմամբ պայմանավորված վճարովիության դեպքերի),

գ. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում՝ նախատեսելով տեղեկատվության տրամադրման համար սահմանված ընդհանուր ժամկետներից ավելի կարճ՝ 2-օրյա ժամկետ այն դեպքերի համար, երբ տեղեկատվություն հայցողը հիմնավոր փաստարկում է, որ հայցվող տեղեկատվությունը անհրաժեշտ է մարդու կյանքի կամ անձնական ազատության

իրավունքի իրացումն ապահովելու նպատակով: Միաժամանակ, օրենքով անհրաժեշտ է սահմանել տեղեկատվության տնօրինող հանրային նշանակության կազմակերպությունների՝ տեղեկատվություն հայցողին վճարում կատարելու անհրաժեշտության մասին ծանուցելու պարտականությունը և տալ լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն հասկացության սահմանումը,

դ. ստեղծել տեղեկատվության ազատության ոլորտում օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող անկախ մարմին, որը կձևավորվի ՀՀ Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով և այդ մարմնին օժտել 1/ տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկատվության տրամադրումը որևէ կերպ մերժելու վերաբերյալ որոշումների, անգործության՝ բողոքի հիման վրա վերանայման, տեղեկատվության տրամադրումը պարտադրելու (մարմինը պետք է իրավասու լինի ընդունել որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման), ինչպես նաև տեղեկատվության տրամադրման կապակցությամբ ծագած վեճը լուծելու համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը այն տնօրինողից պահանջելու լիազորություններով, 2/ ոլորտի մշտադիտարկման, այդ թվում՝ տեղեկատվություն տնօրինող սուբյեկտների կողմից օրենքով պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը ժամանակին և ամբողջական հրապարակելու պարտականության կատարման նկատմամբ վերահսկողության լիազորությամբ, 3/ տեղեկություն տնօրինող սուբյեկտներին տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրության կիրառման հարցում աջակցության լիազորությամբ (ռեսուրսների խնայման նպատակով՝ հնարավոր է այս մարմնի շրջանակներում միավորել աճանական տվյալների պաշտպանության գործակալության գործառնությունները),

ե. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պրոակտիվ հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը համարել գնումների գործընթացին վերաբերող ամփոփ տեղեկատվությամբ, գաղտնագերծված տեղեկությունների վերաբերյալ ծանուցումներով, բյուջեի և դրա կատարողականի վերաբերյալ մատչելի և միասնական ձևաչափով ներկայացվող տեղեկատվությամբ (մանրամասնեցված կարգը կարող է սահմանվել ՀՀ կառավարության որոշմամբ), իրականացվող ծրագրերով և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվություններով,

զ. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը չկատարելու համար վարչական պատասխանատվություն նախատեսող 189.7-րդ հոդվածում կատարել փոփոխություններ՝ նախատեսելով պատասխանատվություն տեղեկատվությունը թերի տրամադրելու, իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն տրամադրելու, տեղեկատվությունը սահմանված ժամկետում չտրամադրելու, ինչպես նաև օրենքի ուժով հրապարակման ենթակա տեղեկատվությունը չհրապարակելու համար, ինչպես նաև վերանայել վարչական պատասխանատվության միջոցների նվազագույն շեմերը,

է. ՀՀ քրեական օրենսգրքի՝ շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ թաքցնելու կամ դրանք դիտավորյալ աղավաղելու համար պատասխանատվություն նախատեսող 282-րդ հոդվածում կատարել փոփոխություններ՝ կապված հանցագործության օբյեկտիվ կողմի, սուբյեկտների շրջանակի, ինչպես նաև նախատեսվող պատժաչափերի խստացման հետ,

ը. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ «ծառայողական գաղտնիք» հասկացությունը հստակեցնելու, ինչպես նաև գաղտնիության աստիճանի տարանջատման չափանիշները սահմանելու նպատակով,

թ. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ վերացնելով ընդլայնված գերատեսչական ցանկերի սահմանման հնարավորությունը և նախատեսելով համապատասխան տեղեկատվությունը ՀՀ կառավարության կողմից ընդունվող միասնական ցանկում ներառելու պահանջ,



ժ. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով պաշտոնատար անձանց պարտականությունը յուրաքանչյուր տեղեկությունը գաղտնագրելիս՝ գաղտնագրման անհրաժեշտության հիմնավորումը, ինչպես նաև գաղտնագրման տևողությունը, գաղտնագրածման հստակ ժամանակը կամ պայմանը նշելու վերաբերյալ,

ի. վերանայել և սահմանափակել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով և համապատասխան կառավարության որոշմամբ նախատեսված գաղտնագրման ենթակա տեղեկությունների շրջանակը: Ընդլայնել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված՝ պետական գաղտնիք հանդիսանալու հիմքով սահմանափակման ոչ ենթակա տեղեկությունների ցանկը, ինչպես նաև առկա ցանկում կատարել որոշակի եզրույթների հստակեցում,

լ. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանել գաղտնագրված տեղեկությունները գաղտնի պահելու անհրաժեշտության/հիմնավորվածության՝ առնվազն 5 տարին մեկ անգամ վերանայելու պարտականությունը սահմանող դրույթ,

խ. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում նախատեսել դրույթ, որը կսահմանի ֆիզիկական անձանց և կազմակերպությունների իրավունքը տեղեկությունը գաղտնագրած պետական մարմին/պաշտոնատար անձին ներկայացնելու այն գաղտնագրածելու պատճառաբանված առաջարկություն՝ այն մերժելու դեպքում՝ բողոքարկման հնարավորություն:

ծ. լրացնել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը՝ նախատեսելով տեղեկություններ գաղտնագրածելիս պետական մարմնի՝ հրապարակային ծանուցման միջոցով հանրության իրազեկման պարտականություն և գաղտնագրծումից հետո առնվազն մեկ տարվա ընթացքում՝ մինչև արժեքավորումն ու փաստաթղթերի ճակատագիրը լուծելը, դրանց ծանոթանալու հնարավորություն սահմանող դրույթ,

կ. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով պատասխանատվություն սահմանել տեղեկությունները ապօրինի կամ չհիմնավորված կերպով պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու, անհրաժեշտից ակնհայտ ավել ժամանակահատվածով գաղտնագրելու, տեղեկությունները գաղտնի պահելու անհրաժեշտությունն օրենքով սահմանված պարբերականությամբ չվերանայելու և տեղեկատվությունը սահմանված ժամկետում չգաղտնագրծելու համար պատասխանատվություն սահմանելու վերաբերյալ,

հ. ստեղծել տեղեկությունների գաղտնագրման, վերանայման, սահմանված կարգով գաղտնագրծման նկատմամբ վերահսկողություն իրականացնող անկախ պետական մարմին, որի գործառույթների իրականացումը կարող է դրվել տեղեկատվության ազատության ոլորտում մասնագիտացած անկախ մարմնի վրա,

ձ. վերանայել ՀՀ կառավարության 04.04.2019թ. թիվ 397-Ն որոշմամբ հաստատված պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը՝ դրանում ներառելով արխիվային արժեք ներկայացնող այլ փաստաթղթեր,

դ. «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն՝ կրճատելով անձնական կամ ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող նյութերի մատչելիությունը սահմանափակող ժամկետը,

ճ. Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքում և ՀՀ քրեական օրենսգրքում սահմանել պատասխանատվություն արխիվային օրենսդրության խախտումների համար: Սահմանել պատշաճ վերահսկողական մեխանիզմներ արխիվային օրենսդրության պահպանման նկատմամբ,

մ. վերանայել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը և դրանից բխող այլ իրավակարգավորումները համապատասխանեցնել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին՝ բացառելով գնումների գործընթացում Հայաստանի

Հանրապետության անվտանգության ապահովման նպատակներից չբխող ծախսերին, ապրանքներին, աշխատանքներին և ծառայություններին առնչվող որևէ տեղեկության գաղտնագրումը,

յ. վերանայել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 2-րդ հավելվածը՝ այն համապատասխանեցնելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ինչպես նաև ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին խոսքի ազատության, այդ թվում՝ տեղեկատվության ազատության իրավունքի ապահովման բնագավառում,

ն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսել պատասխանատվություն գնումների բնագավառում հաշվետվողականության կամ թափանցիկության պահանջների խախտման համար,

շ. փոփոխել «Արտակարգ դրության իրավական ռիժիմի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 12-րդ մասի դրույթը՝ սահմանելով, որ տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակումը ծայրահեղ միջոց է և կարող է կիրառվել բացառիկ դեպքերում, երբ որևէ այլ միջոցով հնարավոր չէ կանխել մարդկանց կյանքին և առողջությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգը:

Վերոնշյալ առաջարկների կապակցությամբ Արդարադատության նախարարությունից հայտնել են, որ ներկայացված առաջարկները քննարկվել են մի շարք համապատասխան մարմինների հետ կազմակերպված աշխատանքային քննարկումների շրջանակներում, և կատարված ուսումնասիրության արդյունքներով նշել են, որ դրանք հիմնականում ընդունելի են: Մասնավորապես, տեղեկացվել է, որ համապատասխան ոլորտներում բացահայտված խնդիրները և այդ խնդիրների լուծման ուղղությունները հիմնականում համադրելի են 2016-2017թթ. մշակված Տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգով վերհանված խնդիրներին և 2017 թվականին մշակված «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի լրամշակված տարբերակով նախատեսված կարգավորումներին: Ամփոփելով առաջարկները՝ Արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ վերլուծությամբ բարձրացված խնդիրները իրական են, իսկ ներկայացված առաջարկները արդիական, սակայն, առաջարկվող լուծումները ոչ բոլոր դեպքերում են ընդունելի՝ կախված դրանց նպատակից, վերաբերելի ոլորտից, այն գործընթացներից և օրենսդրության կիրառման վերաբերյալ այն զարգացումներից, որոնք առկա են: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնվել է, որ բարձրացված խնդիրները և առաջարկվող լուծումները ըստ անհրաժեշտության կարող են լրացուցիչ քննարկվել և համադրվել այլ հնարավոր լուծումների հետ՝ առաջիկայում նախաձեռնվող օրենսդրական փոփոխությունների շրջանակում:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված ՋԼՄ ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման և վերջիններիս վերաբերյալ տվյալների հրապարակային հասանելիության պահանջին, ապա Արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ ՀՀ արդարադատության նախարարությունը ՀՀ Կենտրոնական բանկի հետ համատեղ մշակել է իրավաբանական անձանց ռեգիստրում իրական շահառուների բացահայտման համակարգի բարեփոխման հայեցակարգը և համապատասխան օրենսդրական փաթեթի նախագիծը: Նախագիծը ս.թ. հոկտեմբերի 24-ին դրվել է [www.e-draft.am](http://www.e-draft.am) հարթակում հանրային քննարկման, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ներկայացվել շահագրգիռ գերատեսչություններին: Ակնկալվում է սույն նախագծերի փաթեթը քննարկել Ազգային ժողովի հաջորդ նստաշրջանի ընթացքում<sup>70</sup>:

<sup>70</sup> Ինչ վերաբերում է «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության՝ սեպտեմբերի 27-ի թիվ 1586-Ն որոշման հավելվածի 9.1 և 9.2 կետերի (այդ թվում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-7-րդ, 13-րդ և 14-րդ մասերի) գործողությանը, ապա

- **Հավաքների ազատության թեմայով վերապատրաստումները**

*Գործողությունը՝ Վերապատրաստումներ իրականացնել հավաքների ազատության թեմայով միջազգային չափանիշների վերաբերյալ:*

ՀՀ ոստիկանության տրամադրված տեղեկությունների համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով նախատեսված հավաքների ազատության թեմայով միջազգային չափանիշներին համապատասխան պարբերական դասընթացների իրականացման ուղղությամբ 2020թ. նախատեսվել է վերապատրաստել ոստիկանության 608 ծառայող: Սակայն ՀՀ-ում Covid-19 համավարակի, ինչպես նաև հետագայում ռազմական դրության հայտարարման կապակցությամբ վերապատրաստման դասընթացները ժամանակավորապես դադարեցվել են: 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում վերապատրաստվել են ոստիկանության ընդհանուր թվով 81 ծառայողներ: 2021թ. ընթացքում նախատեսված է վերապատրաստել ոստիկանության 513 ծառայող, իսկ 2022թ. համար վերապատրաստման ենթակա ոստիկանության ծառայողների քանակը դեռևս պլանավորած չէ: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման կենտրոնում ՀՀ ոստիկանությունում տարբեր պաշտոններ զբաղեցնող ծառայողների հետ իրականացված դասընթացների ընթացքում Վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության և Սահմանադրական իրավունքի ամբիոնների դասախոսների կողմից հիմնականում դասավանդվել են «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը և ոլորտի միջազգային առաջավոր փորձը, «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ոստիկանության պարտականությունները և պատասխանատվությունը օրենքը խախտելու համար ու «Հավաքների ժամանակ ոստիկանության գործողությունների» ուղեցույցի ուսումնասիրում թեմաները, մեթոդաբանությունը՝ դասախոսություն, ժամաքանակը՝ շաբաթական առնվազն 2 ժամ, որոշ խմբերում որպես ստուգման ձև նախատեսվել է քննությունը: Միաժամանակ, ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 23-ի «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածով ՀՀ ոստիկանության ծառայողների համար անցկացվում են ծառայողական պարապմունքներ շաբաթական 1 (մեկ) անգամ: Ծառայողական պարապմունքների թեմատիկ պլանում ներառված են նաև հավաքների ազատության վերաբերյալ դասաժամեր:

## Իրավահավասարություն, խտրականության արգելք

- **Ատելության խոսքը**

*Գործողությունը՝ Պատասխանատվություն սահմանել ատելության խոսքի համար՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Բարձրացնել իրազեկվածությունը ատելության խոսքի վերաբերյալ:*

նշված իրավակարգավորումների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը ներկայումս քննվում է Սահմանադրական դատարանում:

Ձևավորվել է ԱԺ աշխատանքային խումբ ատելության խոսքի անհրաժեշտ կարգավորումները քննարկելու համար: Աշխատանքային խմբում ներգրավված են նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Աշխատանքային խմբի քննարկումը տեղի ունեցել է մեկ անգամ, մշակված որևէ նախագիծ դեռ չի հանրայնացվել, ուստի բովանդակային գնահատական դրան չի կարող տրվել:

- **Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնությունը**

*Գործողությունը՝ օրենսդրորեն սահմանել հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման կանոնները:*

Ըստ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության այս գործողությունը բաղկացած է երկու ենթագործողություններից, որոնցով նախատեսվում է 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծն ուղարկել Ազգային ժողով, «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագիծն ուղարկել Ազգային ժողով: 2 նախագիծերն էլ հրապարակվել են e-draft հարթակում և ըստ վերջին տեղեկատվության գտնվում են ՀՀ վարչապետի աշխատակազմում: Պատերազմի և ներքաղաքական իրավիճակի լարվածության արդյունքում հատկապես ակնհայտ են դարձել մարտահրավերները ատելության խոսքի հետ կապված: Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական սպասարկումն ու օգնությունն ավելի ակտուալ է դարձել պատերազմի հետևանքով հաշմանդամություն ունեցող անձանց աճի և վերջիններիս բժշկական օգնություն տրամադրելու անհրաժեշտության համատեքստում:

## Խոշտանգումների արգելք

---

- **Խոշտանգումների արգելքը**

*Գործողությունները՝ Քրեականացնել անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Քրեականացնել դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքն ու պատիժը՝ ՄԱԿ-ի խոշտանգումների կանխարգելման կոնվենցիայի սկզբունքներին համաձայն:*

Խոշտանգումների դեմ պայքարի ոլորտում դատավարական պայքարի հիմնական կառուցակարգը հատուկ քննչական ծառայության համակարգում գործող խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության կարողությունների զարգացումն է: Այդ նպատակով ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրով նախատեսված է վերոնշյալ վարչության աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով ձևավորել նաև օպերատիվ-հետախուզական ստորաբաժանում: Այս ուղղությամբ նախաքննական մարմնում դեռևս աշխատանքներ չեն տարվում: Վերջնարդյունքը հնարավոր կլինի դիտարկել 2021թ. առաջին կեսին:

## Գործի արդար քննության իրավունք

### ▪ **Գործի արդար քննության իրավունքը, բերման ենթարկելու ինստիտուտի իրավակարգավորումները**

Բերման ենթարկելու ինստիտուտի հստակ իրավակարգավորումները, դրա իրացման մեխանիզմներում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հստակեցման հիմնախնդիրը իր լուծումն է ստացել քրեական դատավարության օրենսգրքի նախագծում, ինչի մասին արդեն իսկ նշվեց: Հարկ է նշել, որ բերման ենթարկելու ինստիտուտի իրացման դատավարական գործընթացի պատշաճ վիճակագրություն իրավապահ մարմինների կողմից, ըստ էության, չի վարվում, ինչը հնարավորություն չի տալիս ամբողջական պատկեր ունենալ հատկապես մարդու իրավունքների խախտումների արձանագրումների վերաբերյալ: Դատախազության, ազգային անվտանգության ծառայության, ոստիկանության կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն՝ բերման ենթարկված անձանց, նրանց իրավունքների պաշտպանության ոլորտում ստացված բողոքների վերաբերյալ առանձին վիճակագրական հաշվառում չի վարվում: Այնուամենայնիվ, վերլուծելով ստացված տեղեկատվությունը և ուսումնասիրության արդյունքները, կարող ենք արձանագրել, որ բերման ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում բողոքները հիմնականում ուղղվում են դատախազությանը, որտեղ դրանց հաշվառում չի վարվում: 2020թ. նոյեմբերի 25-ի դրությամբ ազգային անվտանգության ծառայությունում որևէ բողոք չի ստացվել բերման ենթարկելու իրավական ընթացակարգերի խախտումների վերաբերյալ: Ոստիկանության ստորաբաժանումների կողմից 2020թ. նոյեմբերի 25-ի դրությամբ բերման ենթարկվել 7963 անձ, այդ թվում՝ հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա: Բերման ենթարկված 1069 անձի նկատմամբ կիրառվել է ձերբակալում, իսկ 393-ի նկատմամբ՝ կալանավորում: Բերման ենթարկելու իրավական ընթացակարգի կանոնները խախտելու վերաբերյալ ստացվել է 53 բողոք: Հարկ է նշել, որ բերման ենթարկված անձանց զննությամբ ոստիկանությունում հայտնաբերվել են 284 դեպքով մարմնական վնասվածքներ, որոնցից միայն 53-ով է իրականացվել ծառայողական քննություն: Դրանցից 44-ը թողնվել է անհետևանք, 1-ը կասեցվել, իսկ 8-ը գտնվում է ընթացքի մեջ: Վերոնշյալ տվյալները վկայում են այն մասին, որ բերման ենթարկելու իրավական գործընթացներում արձանագրվում են նաև ուժի անհամաչափ կիրառման դեպքեր, որոնց վերաբերյալ պատշաճ քննություն չի վարվում: Ընդ որում, այլ իրավապահ մարմինների կողմից բերման ենթարկելու դեպքերի վերաբերյալ հաշվառում չվարելը և ուսումնասիրություններ չիրականացնելը կարող է հանգեցնել նաև դեպքերի թաքցման մեծ ռիսկերի: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից նախատեսվում է 2020 թվականի տարեկան հաշվետվության մեջ անդրադարձ կատարել նաև բերման ենթարկելու գործընթացում մարդու իրավունքների խախտման դեպքերին, ինչպես նաև այդ ոլորտում այլ խնդիրների ուսումնասիրությանը: Ոլորտի վերաբերյալ ամբողջական պատկեր ունենալու լուծումը դատախազության կողմից միասնական վիճակագրության վարումն է, ինչը հնարավորություն կտա բացահայտել բերման ենթարկելու իրավական ընթացակարգերի խախտման պատճառները և վերլուծությունների արդյունքում ներկայացնել նաև առաջարկներ:

*Գործողությունը՝ Օրենսդրորեն ամրագրել գրավի՝ որպես այլընտրանքային խափանման միջոցի կիրառման հստակ չափանիշներ:*

2020թ. ապրիլի 14-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1480 որոշման ամբողջական իրացումը ապահովող քրեական դատավարության օրենսգրքի փոփոխության նախագիծը, որով գրավը դիտարկվում է որպես հիմնական խափանման միջոց, այլ ոչ լոկ կալանավորմանն այլընտրանք: Այսպես՝ Քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ 1. Գրավը դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի կամ դատախազության դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է: Որպես գրավ կարող է ընդունվել անշարժ գույքը: 2. Գրավի արժեքի ապացուցման պարտականությունը կրում է գրավատուն: 3. Գրավի չափը չի կարող պակաս լինել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափից: Գրավը ենթակա է մուծման վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշման կայացման պահից երկօրյա ժամկետում: 4. Մինչև գրավի մուծված լինելու մասին ապացույցներ ստանալը վարույթն իրականացնող մարմինն ազատության մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառում է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը: 5. Գրավի մուծված լինելու մասին ապացույցներ ստանալով՝ վարույթն իրականացնող մարմինը վերացնում է կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը կամ անձին ազատում է ձերբակալումից և այդ մասին ծանուցում իրավասու մարմնին՝ կասկածյալի կամ մեղադրյալի՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունքը սահմանափակելու նպատակով: 6. Սույն օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ որպես խափանման միջոց ընտրված գրավը չմուծելու հետևանքով վարույթն իրականացնող մարմնի կողմից մեղադրյալին կալանավորման միջնորդություն դատարան ներկայացվելու դեպքում դատարանն իրավասու է նաև նվազեցնելու գրավի չափը: 7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքում դատարանի կողմից գրավի չափը նվազեցնելու և այն փոփոխելու վերաբերյալ որոշում կայացվելուց հետո մեղադրյալը երկօրյա ժամկետում պարտավոր է մուծել դատարանի սահմանած գրավը, իսկ չմուծելու դեպքում քրեական հետապնդման մարմնի միջնորդության հիման վրա կարող է կալանավորվել: 8. Եթե կասկածյալը կամ մեղադրյալը կատարել է սույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք, ապա գրավը պետության եկամուտ է դարձվում դատարանի որոշմամբ՝ դատախազի միջնորդության հիման վրա, իսկ քրեական գործը դատարանում քննելիս՝ նաև դատարանի նախաձեռնությամբ: Գրավը պետության եկամուտ դարձնելու կամ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան: 9. Գրավը վերադարձվում է գրավատուին այն դեպքերում, երբ չի ապացուցվել սույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներ կատարելու հանգամանքը, կամ գրավը՝ որպես խափանման միջոց, վերացվել կամ փոխվել է: Գրավը վերադարձնելու մասին որոշումն ընդունում է քրեական վարույթն իրականացնող մարմինը՝ համապատասխան խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ:

▪ **Ազդարարման համակարգը**

2020թ. ազդարարման համակարգի կատարելագործման օրենսդրական և ոչ օրենսդրական աշխատանքներ չեն իրականացվել: Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ համակարգով 2019-2020թթ. ընթացքում ստացվել է 319 հաղորդում, որից 126-ով մերժվել է վարույթի հարուցումը, 193-ով հարուցվել է վարույթ: Դրանցից 6-ով հարուցվել է քրեական գործ, 125 վարույթ կարճվել է, 62-ով միջոցառումները շարունակվում են: